№ 129 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ, 16 ՅՈՒՆԻՍԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇՈՐԵՔՇԱԲԹԻ, 16 ՅՈՒՆԻՍԻ № 129

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». TIFLIS, Rédaction «MSCHAK».

Յայտարարութիւնների համար վճարում են. 1 երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

„Մշակի“ խմբագրութիւնը յիշեցնում է այն բաժանորդներին, որոնք վճարել են 5-ական ռուբլի, շտապել ուղարկել մնացորդ 5 ռուբլին, որպէսզի յունիսի 1-ից չրագրի առաքման գործում ընդհատում տեղի չունենայ:

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ, ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ

նշանակված է չորեքշաբթի, յունիսի 16-ին, առաւօտեան 10½ ժամին, Կ. Հ. Բարեգործական Ընկերութեան դահլիճում: Այս ժողովը երկրորդ անգամ հրաւիրված լինելով, կը կայանայ, որքան անդամ էլ ներկայ լինի:

Օրակարգ. 1) տեղեկագիր, 2) ընտրութիւն վարչութեան և վերահսկիչ յանձնաժողովի անդամների և փոխանդամների և 3) ընթացիկ խնդիրներ:

Ժողովի շարունակութիւնը հինգշաբթի:

(ա.) 741. 1—1

Մանկական պարէզ, ուսումնարան և պանսիոն

Տ. Վ. ՀՄՇԿԵԱՆԻ

Յունիսի 19-ից տեղափոխվում է ամարանոց Դիլիջան: Ընդունում է զբաղեցնող աշակերտներ պտղաստանալու գիմնազիայի փոքր և մեծ պատրաստականների, առաջին և երկրորդ դասարանների համար, նոյնպէս պատրաստում է և վերաքննութիւնների համար: Великокняжеская ул. 71, противъ нар. д. Зубалова.

(ա.օ.) առ. 737. 3—2

Սարուխանովո-Կուրինսկի Ակցիոներական Ընկերութեան Վարչութիւնը

ՁԵՌՆԱՐԿԵԼՈՎ ՇՈՒՇՈՒ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ

սրանով յայտնում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ սոյն 1910 թվի մայիսի 5-ից սկսած վաճառվում են ակցիաները հետեւեալ պայմաններով.

1) Իւրաքանչիւր ակցիայի իսկական գինը 50 ռուբլի է:

2) Ստորագրվելիս ընդունվում է իսկական գնի 20% վճարը, իսկ մնացած 80%-ը իւրաքանչիւր 1 ամսից յետոյ 10-ական տոկոսով: Մտցրած գումարի համար տրվում է ժամանակաւոր անդորրագիր, որը՝ ամբողջ գումարն ընդունելից յետոյ՝ փոխարինվում է ժամանակաւոր վկայականներով:

3) Ակցիաների ստորագրութիւններն ու վճարները ընդունվում են.
Պետերբուրգ՝ Մեծդունարօյնի բանկում:
Մոսկվա՝ նոյն բանկի բաժանմունքում:
Բագու՝ նոյն բանկի բաժանմունքում:
Բալախանի՝ նոյն բանկի բաժանմունքում:
Թիֆլիս՝ Ազովսկо-Դոնսկի բանկում:
Ելիսաւետպոլ՝ նոյն բանկի բաժանմունքում:
Շուշի՝ Փոխադարձ Վարկում (Վգայիմի Կրէդիտում):
Նուխի՝ Թիֆլիսի Առևտր. բանկի բաժանմունքում:
Նուխի՝ Տեղական Փոխադարձ Վարկում (Վգայիմի Կրէդիտ):
Ռոստով՝ Ռուսսկо-Իտալական բանկում:
Կոկանդ՝ նոյն բանկի բաժանմունքում:
Սամարղանդ՝ նոյն բանկի բաժանմունքում:
Վլադիկավկազ՝ Տեղական Փոխադարձ Վարկում (Վգայիմի Կրէդիտ):

4) Ստորագրութիւնը կը շարունակվի երկու ամիս՝ սկսած մայիսի 5-ից, որից յետոյ կը դադարեցվի: 200-ից աւելի ակցիա ուզողներին բաւարարութիւն կը տրվի վարչութիւնից ստորագրութիւնների ընդհատումից յետոյ, եթէ միայն բոլոր ակցիաները բաժանված չը լինեն:

5) Ստորագրութիւնն ընդունվում է ժամը 10-ից մինչև 2-ը ցերեկվայ:

6) Ընկերութեան կանոնադրութիւնը բարձրագոյն հաստատված է 1909 թվի յունվարի 23-ին:

7) Երկաթուղու գործի հետ ծանօթանալ և առհասարակ որևէ տեղեկութիւն իմանալ ցանկացողները կարող են դիմել անձամբ կամ գրաւոր Սարուխանովո-Կուրինսկի Ակցիոներական Ընկերութեան գրասենեակը՝ Բագու, Մօլօկանսկայա փողոց, տուն Սպադաւիկիա № 17, ամեն օր՝ ցերեկվայ ժամը 10-ից մինչև 2-ը, բացի տօն օրերից:

Վարչութեան դիրեկտորներ՝ Դ. Ս. Ս. Հ.-Զ.-Ա. Թաղիեվ, Ս. Ի. Բիրկի, Դ. Բ. Աբան-Իւղբաշեան

Դիրեկտոր-կարգադրիչ՝ Մ. Մ. Սարուխանեան

(Հ. ու.) առ. 706. 5—3

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ռ., 6 և 7 ամսվ. 6 ռ., ամսակ. 1 ռ. Ամերիկա՝ տարեկան 6 դօլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թուրքիա՝ 120 ղրուշ:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակագրոշմով):

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Լոնդոն, 14 յունիսի

Համայնքների պալատ: Պատգամաւոր Պրաիսը հարց է դնում, թէ վերջին ժամանակներս անգլօ-ռուսական նստայում առաջադրութիւն արվե՞լ է, արդեօք, պարսից կառավարութեանը ներքին կօնցէսիաների վերաբերութեամբ:

Գրէյը պատասխանեց. «Ես չեմ կարող այժմ որևէ բան ասել այն յարաբերութիւնների մասին, որ վերջերս տեղի էին ունենում բրիտանական և ռուսական կառավարութիւնների միջև մի կողմից և պարսկականի՝ միւս կողմից»:

Պատասխանելով երկրորդ հարցադրման, Գրէյը ասաց. «Հասարակական կարգի կացութիւնը Պարսկաստանի հիւսիսում ռուսաց կառավարութեան կարծիքով այնպիսի չէ, որպէսզի հնար լինի դուրս հանել անմիջապէս երկրից ռուսաց զօրքերին. սակայն կարծում եմ, որ վերջիններիս թիւը շուտով կը պակասեցվի»: (Հ. Գ.)

Կ. Պոլիս, 14 յունիսի

Թիւրքաց մամուլը միաբերան ողջունում է հովանաւորող-պետութիւնների նոտան, որով ազդարարվում է, թէ կրետական հարցը շուտով վերջնական լուծումն կը ստանայ: (Հ. Գ.)

Կ. Պոլիս.—Բիթլիսի վալի Թահիր փաշան [illegible] ռուսական-Ֆեդայաւազակների խժդժութիւնները, հալածում է բողոքող հայերին: Խաղաղ ազգաբնակութեան տրամադրութիւնը ճնշված է: Ներքին գործերի մինիստրին ուղղված յամախակի դիմումները մինչև օրս մնում են անհետևանք: Ազգաբնակութեան բողոքների արձագանք հանդիսանում է «Դաշնակցութեան» կենտրոնական կոմիտէի դիկլարացիան, որ յանուն սահմանադրութեան պահանջում է անմիջապէս փոխել հին ըէժիմի պաշտօնեաներին և նշանակել նորերը, պատժել յանցաւորներին և վերադարձնել հայերին ֆէօդալների գրաւած հողերը:

(«Բեչ»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Քերքի (Անդրկասպ. երկիր), 1 յունիսի Թերմէզից Զարջոյ վերադառնալիս մի մի քանի օրով մնացի Քերքիում:

Մայիս 23-ին ծխ. ժողով կար Քերքիում նոր շինված հայոց դպրոցի դահլիճում: Ժողովին նախագահում էր Զարջոյի ծխատեր Գարեգին ք. Ասրեանը. ծխ. հոգաբարձութիւնը օրակարգի մէջ էր դրել առաջիկայ ուսումն. տարում դպրոցը բանալու հարցը: Ժողովը բազմամարդ էր. ամենքը հետաքրքրվելով դպրոցական հարցով՝ շտապել էին այդ ժողովին մասնակցել: Երկար խորհրդակցութիւնից յետոյ ծխ. ժողովը միաձայն վճռեց առաջիկայ 1910—11 ուսումն. տարում ունենալ ուսումնարան մի բաժանմունքով և մի դասատուով, որի համար կազմեց տարեկան բիւջէ 1200 ռ.: Ուսուցչէը պիտի ստանայ տարեկան 720 ռ. ռոճիկ, ճանապարհածախք, վառելիք, լուսաւորութիւն և ծառայ:

Ներկայ հոգաբարձութիւնը, որի անխոնջ աշխատանքով է կառուցվել դպրոցի հոյակապ շէնքը և նրա բացման համար ոչ մի աշխատանք չէ խնայված, արժանի է անկեղծ համակրանքի:

Մխիթարական է այն երևոյթը, որ Քերքիի հայ գաղութի անդամները սիրով ու համերաշխութեամբ են տանում իրանց հասարակական գործերը. դա մի հաղուագէպ երևոյթ է մեր համայնական-հասարակական գործերում:

Նորեկ

Կոկանդ, 7 մայիսի

Ամսիս 6-ին, Հոգեգալստեան տօնի օրը, կատարվեց տեղիս հայոց աղօթատան և ուսումնարանի շինութեան հիմքի օրհնութիւնը: Օրհնութեան արարողութիւնը վերցնելու «Տաւիտանինիо» լրագրի խմբագրի ճառը, որ վիրաւորանք հասցրեց Նորին Մեծութեան:

«Ֆիրէնի» խմբագիրը, որ պատասխանատուութեան էր ենթարկվում ուղղափառ զանանանքը վիրաւորելու մէջ, արդարացաւ: (Հ. Գ.)

Պարիզ, 14 յունիսի

Ֆալիէրը ի պատիւ բոլգարական թագաւորական զոյգի ճաշ տուեց: Երեկոյեան թագաւորական զոյգը և Ֆալիէրը ներկայ եղան օպերային ներկայացման:

Բրիանը, պատասխանելով հարցասուներին, ասում է, որ կառավարութիւնից մտադիր է օգտվել իշխանութիւնից, յենվելով հանրապետութեան վրա: Այն կուսում, որ հանրապետութեանը վիճակված էր ունենալ, կառավարութիւնը երբեմն ստիպված է եղել յաղթութիւնը ապահովելու համար դիմել ծայրայեղ միջոցների, բայց երբ մի անգամ արդէն կռիւը վերջացել է, ամեն մի զօրահրամանատար պարտաւոր է կանգնեցնել նրան, որպէսզի յաղթութիւնը չապականվի (բուռն ծափահարութիւն ձախից և կենտրօնից): Պատասում Բրիանի ճառի ժամանակ ներկայ էր Ֆերդինանդ թագաւորը:

Վերջերս ոստիկանութեան հետ ունեցած ընդհարման մէջ սպանված հիւսնի թաղմանը սինդիկատների անդամները, ցոյց տալով, մի շարք արկեանների ընդհարումներ ունեցան ոստիկանութեան հետ: Կան բազմաթիւ վիրաւորվածներ: (Հ. Գ.)

Պէկին, 14 յունիսի

Հրատարակվեց մի հրովարտակ, որով մերժվում է գաւառական պատգամաւորների երկրորդ միջնորդութիւնը պարլամենտ շտապելու մասին: Հրովարտակով նորոգվում է այսուհետև նման միջնորդութիւններով դիմել կառավարութեան:

Զինաստանում տիրող ընդհանուր շարժման առիթով մանչուրական իշխանութեանը պատուիրգրված է ամեն միջոց ձեռք առնել թոյլ չը տալու յեղափոխական պրոպագանդան Մանչուրիայում: Այդ տեսակ պրոպագանդա տեսնելու դէպքում պատուիրված է ճնշել հէնց սկզբից ևեթ: (Հ. Գ.)

Խրիստիանիա, 14 յունիսի

Լրագիրների տեղեկութիւնների համաձայն, ֆինանսների լաւ դրութեան պատճառով կառավարութիւնը մտադիր է առաջարկել ստորտինգին յատկացնել ծովային վարչութեան արտակարգ ծախքերի համար 4 միլիոն կրոն անցեալ տարվայ 5 միլիոն մնացորդից:

(Հ. Գ.)

Բուխարեստ, 14 յունիսի

Բումինական հեռագրական գործակալութիւնը հաղորդում է, որ թագուհի Ելիսավետայի վատառողջութեան լուրերը անհիմն են: (Հ. Գ.)

Պետերբուրգ.—Պետական Դումայի կուլուարներում լուրեր են պտտում, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստր Շվարցը հրաժարական է տալիս:

Արքունի երկաթուղիների վերատեսուչ կօվիրէվը գալիս է դիտելու կովկասեան երկաթուղագծերը:

«Русское Знамя»-ն մատնանշում է, որ ֆինլանդական երկաթուղիների վրա ծառայում են կովկասցի յեղափոխականներ:

Ահնանը Պետական Դումային կը ներկայացվի ժամուլին վերաբերող օրինագիծը:

Ծովային մինիստրութիւնը վճռեց աշնանը նորից առաջարկութիւն անել Դումային յատկացնել 27 միլիոն ռուբլի ծովային վարչութեան գործարանների պարտքերը հատուցանելու համար: («Б.»)

Կիէվ.—Տօտմեանցին ժողովրդական լուսաւորութեան մինիստրը չը հաստատեց կօօպերացիայի պատուութեան և թէօրիայի դօցենտի պաշտօնում: («Б.»)

Եկատէրինօսլաւ.—Փակվեցին շատ արհեստակցական միութիւններ: 51-ից մնացել են միայն 13-ը: («Б.»)

Աթէնք.—Փողոցում ցոյց եղաւ օգիցերների ժամանակութեամբ Զօրքասի հրաժարականի առիթով: Դրութիւնը յուզալի է: («Б.»)

Պարիզ.—Վճռվեց 1920 թվին հիմնել համաշխարհային ցուցահանդէս: («Б.»)

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Լոնդոն, 14 յունիսի

Համայնքների պալատ: Պատգամաւոր Պրաիսը հարց է դնում, թէ վերջին ժամանակներս անգլօ-ռուսական նստայում առաջադրութիւն արվե՞լ է, արդեօք, պարսից կառավարութեանը ներքին կօնցէսիաների վերաբերութեամբ:

Գրէյը պատասխանեց. «Ես չեմ կարող այժմ որևէ բան ասել այն յարաբերութիւնների մասին, որ վերջերս տեղի էին ունենում բրիտանական և ռուսական կառավարութիւնների միջև մի կողմից և պարսկականի՝ միւս կողմից»:

Պատասխանելով երկրորդ հարցադրման, Գրէյը ասաց. «Հասարակական կարգի կացութիւնը Պարսկաստանի հիւսիսում ռուսաց կառավարութեան կարծիքով այնպիսի չէ, որպէսզի հնար լինի դուրս հանել անմիջապէս երկրից ռուսաց զօրքերին. սակայն կարծում եմ, որ վերջիններիս թիւը շուտով կը պակասեցվի»: (Հ. Գ.)

Կ. Պոլիս, 14 յունիսի

Թիւրքաց մամուլը միաբերան ողջունում է հովանաւորող-պետութիւնների նոտան, որով ազդարարվում է, թէ կրետական հարցը շուտով վերջնական լուծումն կը ստանայ: (Հ. Գ.)

Կ. Պոլիս.—Բիթլիսի վալի Թահիր փաշան [illegible] ռուսական-Ֆեդայաւազակների խժդժութիւնները, հալածում է բողոքող հայերին: Խաղաղ ազգաբնակութեան տրամադրութիւնը ճնշված է: Ներքին գործերի մինիստրին ուղղված յամախակի դիմումները մինչև օրս մնում են անհետևանք: Ազգաբնակութեան բողոքների արձագանք հանդիսանում է «Դաշնակցութեան» կենտրոնական կոմիտէի դիկլարացիան, որ յանուն սահմանադրութեան պահանջում է անմիջապէս փոխել հին ըէժիմի պաշտօնեաներին և նշանակել նորերը, պատժել յանցաւորներին և վերադարձնել հայերին ֆէօդալների գրաւած հողերը:

(«Բեչ»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Քերքի (Անդրկասպ. երկիր), 1 յունիսի Թերմէզից Զարջոյ վերադառնալիս մի մի քանի օրով մնացի Քերքիում:

Մայիս 23-ին ծխ. ժողով կար Քերքիում նոր շինված հայոց դպրոցի դահլիճում: Ժողովին նախագահում էր Զարջոյի ծխատեր Գարեգին ք. Ասրեանը. ծխ. հոգաբարձութիւնը օրակարգի մէջ էր դրել առաջիկայ ուսումն. տարում դպրոցը բանալու հարցը: Ժողովը բազմամարդ էր. ամենքը հետաքրքրվելով դպրոցական հարցով՝ շտապել էին այդ ժողովին մասնակցել: Երկար խորհրդակցութիւնից յետոյ ծխ. ժողովը միաձայն վճռեց առաջիկայ 1910—11 ուսումն. տարում ունենալ ուսումնարան մի բաժանմունքով և մի դասատուով, որի համար կազմեց տարեկան բիւջէ 1200 ռ.: Ուսուցչէը պիտի ստանայ տարեկան 720 ռ. ռոճիկ, ճանապարհածախք, վառելիք, լուսաւորութիւն և ծառայ:

Ներկայ հոգաբարձութիւնը, որի անխոնջ աշխատանքով է կառուցվել դպրոցի հոյակապ շէնքը և նրա բացման համար ոչ մի աշխատանք չէ խնայված, արժանի է անկեղծ համակրանքի:

Մխիթարական է այն երևոյթը, որ Քերքիի հայ գաղութի անդամները սիրով ու համերաշխութեամբ են տանում իրանց հասարակական գործերը. դա մի հաղուագէպ երևոյթ է մեր համայնական-հասարակական գործերում:

Նորեկ

Կոկանդ, 7 մայիսի

Ամսիս 6-ին, Հոգեգալստեան տօնի օրը, կատարվեց տեղիս հայոց աղօթատան և ուսումնարանի շինութեան հիմքի օրհնութիւնը: Օրհնութեան արարողութիւնը վեր-

ԱՆԻԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ Ա. ՌԱՋԱՐԿԸ

«Մշակի» երէկվայ և այսօրվայ համարներում զետեղված բանաստեղծությունից մեր ընթերցողները կը տեղեկանան, որ պրոֆեսոր Մարրը հրապարակի վրա է դրել Անիի հնագիտական ինստիտուտի խնդիրը:

Նա առաջարկում է Անիում հիմնել հնագիտական ուսումնասիրութիւնների մի կենտրոնական հաստատութիւն, որը իր ղեկավարութեան տակ առնէր թէ բուն Անիի ու նրա շրջակայքի և թէ Անդրկովկասի ուրիշ տեղերի հնագիտական ուսումնասիրութիւնների գործը:

Անին և նրա շրջակայքը դեռ շատ տարիներ կը մատակարարեն առատ նիւթ հնագիտական հետախուզութիւնների համար: Պատմական, ճարտարապետական, գեղարուեստագիտական, կենցաղագրական կարևոր ցուցումների և նմուշների թիւը տարէ-ցտարի աւելանում է, ճոխացնելով այն թանգարանը, որ բացված է Անիում, և կենսական գծեր տալով անցեալ կեանքի յիշատակարաններին, որոնք մինչև այժմ ուրուագծել էին պատմական ամբողջ շրջաններ միայն արտաքին մի քանի եղելութիւններով:

Երբ Անին, իր մեծաւոր դրացիութեան մէջ գտնվող Երերոյքով, Բագարանով, Մրէնով, Դիգորով և ուրիշ նշանաւոր պատմական վայրերով հանդէս կը բերի այն մեծ պատմական-կուլտուրական նիւթը, որ ծածկված է եղել մինչև այժմ մեր տեսութիւնից, մենք ոչ միայն կը պարզենք հայկական պատմութեան մի խոշոր շրջանը, այլ և կունենանք մեր ձեռքին մեր երկրի կուլտուրական անցեալի այնպիսի նշանաւոր էջեր, որոնք լոյս կը սփռեն Առաջաւոր Ասիայի կուլտուրական պատմութեան վրա:

Իսկ ընդարձակելով ուսումնասիրութիւնների հորիզոնները և գործադրելով մի տեղից ստացած ցուցումները և փորձառութիւնները մեր երկրի միւս տեղերում, մենք հոգ կը պատրաստենք կարևոր գիտական ընդհանրացումներ և պատմական յաջորդականութեան ու կուլտուրական ժառանգականութեան ատիճանների որոշման համար:

Անիում հնագիտական ինստիտուտ հիմնելու գաղափարը, իբրև գործնական առաջարկ, հանդէս է բերվել ոչ պատահական եղանակով և ոչ իբրև մի ինքն բան ինքեան օգտուէտ առաջարկ: Ոչ: Նա հրապարակ է հանվել մի շարք գիտական լուրջ աշխատանքներից, մի նախնական թանգարան հիմնելուց, գործողների մի խումբ կազմելուց և գործի որոշ ժողովրդականութիւն ստանալուց յետոյ:

Այն հետաքրքրական, ուսանելի և բեղմնաւոր արդիւնքներից յետոյ, որոնք ստացվել են Անիի, նրա շրջակայքի, Գառնիի, Աբարանի և ուրիշ տեղերի պեղումներից և հետախուզութիւններից, բնական էր մի այնպիսի առաջարկ, ինչպիսին այժմ անում է պրոֆեսոր Մարրը:

Պահպանել ժողովված նիւթերը, մշակել նրանց մէջ պարունակված գիտական ցուցումները, շարունակել գեղեցիկ սկզբնաւորութիւնը, ընդարձակել ուսումնասիրութիւնների հորիզոնները, համակարգութիւն մտցնել գիտական աշխատանքների մէջ, խրախուսել նոր ուսումնասիրութիւններ, աջակցել հետախոյզներին մասնաւորապէս գիտական և նիւթական քաջալերութեամբ—այդ բոլորը մի նշանաւոր չափով իրագործված կը լինի այն հնագիտական ինստիտուտով, որի հիմնադրութեան խնդիրը դրել է Մարրը, զետեղելով հաստատութիւնը Անդրկովկասեան հնագիտական հետախուզութիւնների գլխաւոր թատերավայրում՝ Անիում:

Մենք չենք կասկածում, որ հայ հասարակութիւնը համակրութեամբ կը վերաբերվի Անիի հնագիտական ինստիտուտի գաղափարին:

Բայց այդ համակրութեան հետ միասին անհրաժեշտ է, որ նա հոգատար լինի նաև ապահովելու այն ծախքերը, որոնք կը պահանջվեն ինստիտուտի գործունէութեան համար:

Ինչ միջոցներ կարելի է առաջարկել և իրագործել—թող, ով ձեռնհաս է, պարզաբանի և իր կողմից առաջին քայլերն անի:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 14 յունիսի

Ամիրալտէյսկայա Նաբերէժնայա հրապարակի վրա, ծովակալութեան շինութեան դիմաց, Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայէվիչի ներկայութեամբ օծվեց Պետրոս Մեծի արձանը, որ նուիրել է Նորին Մեծութիւնը Պետերբուրգ քաղաքին: Շինութեան բոլորքը շարվեցին զօրքերը: Հանդիսաւորութեամբ եկան օրէր-եպէրմէյստէր Բալաշով, ծովային մինիստրը, զինուորական և ծովային վարչութիւնների բարձրաստիճան ներկայացուցիչները, Պետական Խորհրդի անդամներից մի քանիսը: Հասարակութիւնը շրջապատել էր Սենատի հրապարակը: Նորին Բարձրութիւնը անցաւ զօրքերի առաջից երաժշտութեամբ: Հոգեւորականութիւնը, գլուխ ունենալով Նիկանդր եպիսկոպոսին, կատարեց գոհաբանական մաղթանք:

Արձանը ներկայացնում է Պետրոս Մեծին կացինը ձեռքին՝ նաւակի ղեկը տաշելիս: Մակագրված է՝ «Պետրոս Մեծ առաջին թագաւորը սովորում է Սաարդամ քաղաքում, Հոլլանդիայում, 1697 թուին»:

Բացումից յետոյ Մեծ Իշխանը բոլոր զօրքի գլուխն անցած անցաւ պատիւներ տալով արձանին: (Հ. Գ.)

Վրբօրդ, 14 յունիսի

Գենեռալ-նահանգապետը բաղդ ունեցաւ թագաւոր Կայսրից հրովարտակ ստանալու Վրբօրդի առման 200-ամեակի առիթով:

Կատարվում են շքեղ հանդէսներ զինուորական մինիստրի ներկայութեամբ: (Հ. Գ.)

Հէլսինգֆորս, 14 յունիսի

Տատմէրֆօրսում մրցահանդիսին ոստիկանութիւնը ստիպված էր ընդհատել «Տաւիտանինիо» լրագրի խմբագրի ճառը, որ վիրաւորանք հասցրեց Նորին Մեծութեան:

«Ֆիրէնի» խմբագիրը, որ պատասխանատուութեան էր ենթարկվում ուղղափառ զանանանքը վիրաւորելու մէջ, արդարացաւ: (Հ. Գ.)

Պարիզ, 14 յունիսի

Ֆալիէրը ի պատիւ բոլգարական թագաւորական զոյգի ճաշ տուեց: Երեկոյեան թագաւորական զոյգը և Ֆալիէրը ներկայ եղան օպերային ներկայացման:

Բրիանը, պատասխանելով հարցասուներին, ասում է, որ կառավարութիւնից մտադիր է օգտվել իշխանութիւնից, յենվելով հանրապետութեան վրա: Այն կուսում, որ հանրապետութեանը վիճակված էր ունենալ, կառավարութիւնը երբեմն ստիպված է եղել յաղթութիւնը ապահովելու համար դիմել ծայրայեղ միջոցների, բայց երբ մի անգամ արդէն կռիւը վերջացել է, ամեն մի զօրահրամանատար պարտաւոր է կանգնեցնել նրան, որպէսզի յաղթութիւնը չապականվի (բուռն ծափահարութիւն ձախից և կենտրօնից): Պատասում Բրիանի ճառի ժամանակ ներկայ էր Ֆերդինանդ թագաւորը:

Վերջերս ոստիկանութեան հետ ունեցած ընդհարման մէջ սպանված հիւսնի թաղմանը սինդիկատների անդամները, ցոյց տալով, մի շարք արկեանների ընդհարումներ ունեցան ոստիկանութեան հետ: Կան բազմաթիւ վիրաւորվածներ: (Հ. Գ.)

Պեկին, 14 յունիսի

Հրատարակվեց մի հրովարտակ, որով մերժվում է գաւառական պատգամաւորների երկրորդ միջնորդութիւնը պարլամենտ շտապելու մասին: Հրովարտակով նորոգվում է այսուհետև նման միջնորդութիւններով դիմել կառավարութեան:

Զինաստանում տիրող ընդհանուր շարժման առիթով մանչուրական իշխանութեանը պատուիրգրված է ամեն միջոց ձեռք առնել թոյլ չը տալու յեղափոխական պրոպագանդան Մանչուրիայում: Այդ տեսակ պրոպագանդա տեսնելու դէպքում պատուիրված է ճնշել հէնց սկզբից ևեթ: (Հ. Գ.)

Խրիստիանիա, 14 յունիսի

Լրագիրների տեղեկութիւնների համաձայն, ֆինանսների լաւ դրութեան պատճառով կառավարութիւնը մտադիր է առաջարկել ստորտինգին յատկացնել ծովային վարչութեան արտակարգ ծախքերի համար 4 միլիոն կրոն անցեալ տարվայ 5 միլիոն մնացորդից:

(Հ. Գ.)

Բուխարեստ, 14 յունիսի

Բումինական հեռագրական գործակալութիւնը հաղորդում է, որ թագուհի Ելիսավետայի վատառողջութեան լուրերը անհիմն են: (Հ. Գ.)

Պետերբուրգ.—Պետական Դումայի կուլուարներում լուրեր են պտտում, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստր Շվարցը հրաժարական է տալիս:

Արքունի երկաթուղիների վերատեսուչ կօվիրէվը գալիս է դիտելու կովկասեան երկաթուղագծերը:

«Русское Знамя»-ն մատնանշում է, որ ֆինլանդական երկաթուղիների վրա ծառայում են կովկասցի յեղափոխականներ:

Ահնանը Պետական Դումային կը ներկայացվի ժամուլին վերաբերող օրինագիծը:

Ծովային մինիստրութիւնը վճռեց աշնանը նորից առաջարկութիւն անել Դումային յատկացնել 27 միլիոն ռուբլի ծովային վարչութեան գործարանների պարտքերը հատուցանելու համար: («Б.»)

Կիէվ.—Տօտմեանցին ժողովրդական լուսաւորութեան մինիստրը չը հաստատեց կօօպերացիայի պատուութեան և թէօրիայի դօցենտի պաշտօնում: («Б.»)

Եկատէրինօսլաւ.—Փակվեցին շատ արհեստակցական միութիւններ: 51-ից մնացել են միայն 13-ը: («Б.»)

Աթէնք.—Փողոցում ցոյց եղաւ օգիցերների ժամանակութեամբ Զօրքասի հրաժարականի առիթով: Դրութիւնը յուզալի է: («Б.»)

Պարիզ.—Վճռվեց 1920 թվին հիմնել համաշխարհային ցուցահանդէս: («Б.»)

ջանալուց յետոյ՝ ծխատէր Ն. ք. Աբրահամեանցը բացատրեց ժողովրդին եկեղեցու և ուսումնարանի նշանակութիւնը։ Քահանան չը մոռացաւ ի միջի այլոց խօսելու թղթախաղի դէմ, որը խոր արմատ է գցել մի որոշ խմբի մէջ։ Տէր-հօր քարոզը լաւ տպաւորութիւն թողեց ժողովրդի վրա։

Օրհնութեան արարողութեանը ներկայ էր տեղիս հայ գաղութի հաւիւ $^1/_3$ մասը...

Այդ օրվայ հանդիսի առիթով մատաղ կար պատրաստված. ցանկացողները մօտեցան մատաղին և ամեն մէկը մէկ կտոր խորոված և մի բաժակ գինի խմելով ցրվեց։

Այս երկրորդ մատաղն է, որ սարքում են՝ չը գիտենք ինչու համար։ Եթէ չենք սխալվում, այս տարի մատաղի համար ծախսված է 200 ր.։ Մեր կարծիքով՝ դա մի աւելորդ ծախս է, որն անվում է ժողովրդի կօպէկներով կազմված գումարից։ Ժամանակ է հասկանալու, որ չէ կարելի ժողովրդի կօպէկները անօգուտ մատաղների վրա ծախսել։ Աւելի լաւ չէր լինի, եթէ մատաղի կազմակերպողները այդ 200 ր. յանձնէին նոր բացվելիք ուսումնարանին, որտեղ այդ գումարով կարելի կը լինէր վճարել առնուազն 20 չքաւոր աշակերտի թոշակ։ Բիչ բան չէ 20 երեխայի փրկել փողոցից և հնարաւորութիւն տալ ուսում առնելու։ Պ. Մանուչարեանց

—

Պ ե ա տ ի գ օ ր ս կ, 5 յունիսի

Մայիսի 31-ին այստեղ ժամանեց Ատրպատականի թեմի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսը։

Սրբազանը, ծանօթանալով տեղիս եկեղեցական, դպրոցական գործին, յունիսի 2-ին կայացրեց ծխական ընդհանուր արտակարգ ժողով։

Դպրոցի նախահաշիւը նախ և առաջ ենթարկեց ժողովի քննութեան, որը կազմված էր երկու առաջարկութիւնից, այն է՝ որ կամ հոգաբարձութիւնը, սուղ միջոցներից բարիված, դպրոցի ելքը կրճատէ՝ երկրորդ և երրորդ բաժանմունքները միացնելով, և կամ եթէ հասարակութիւնը օգնութեան գայ՝ ընդարձակելու դպրոցը, աւելացնելով չորրորդ բաժանմունք՝ միացած երրորդի հետ։ Ձայնի բազմութեամբ ընդունվեց դպրոցի ընդարձակման առաջարկը և հաստատվեց նախահաշիւը 2355 ր. ելումտուրքով։ Այս նախահաշուից բաց էր մնում 535 ր., որի համար ժողովականներից ոմանք կամաւոր նուիրաբերութեամբ օգնութեան հասան և ստորագրութիւնը հասաւ մօտ 700 ր.։ Ուրեմն եկող ուսումնական տարում բացվելու է չորրորդ միացեալ բաժանմունք։ Ուրախալի է, որ դպրոցի դասընթացը երկարելով՝ բացառապէս չքաւոր դասակարգի երեխաների կրթարան մեր դպրոցը հնարաւորութիւն կը տայ նրանց աւելին սովորելու։

Պէտք է նկատել մի հանգամանք, որ դպրոցից երեխաները դիմում են, շատ քիչ բացառութեամբ, քաղաքային օրիորդաց և տղայոց դպրոցները, կամ անմիջապէս մտնում են արհեստի, կամ դառնում են խանութի աշակերտ։

Մնողները ստիպվում են օր առաջ հաց աշխատող դարձնել երեխային, կամ պատրաստելով աւելի շուտ տեղաւորել պետական դպրոցում։ Այստեղ ոչ նմանելու, ոչ ուրիշից յետ չը մնալու և ոչ ցուցամոլութիւնից է այդ առաջ գալիս, այլ տնտեսական պայմաններն են, որ ստիպում են հնար որոնել, որդուն հասեմատական աւելի աշխատող դարձնելու։

Եթէ հոգաբարձութիւնը հնարաւորութիւն գտնէ դպրոցը երկդասեանի վերածել 5—6 տարվայ դասընթացով, պարտաւորական դարձնելով և մի որևէ արհեստ, օրինակ՝ կօշկակարութիւն, դերձակութիւն, հիւսնութիւն և այլն, իսկ օրիորդների համար կարու ձև, այն ժամանակ ծնողները սիրով երեխային կը թողնեն, որ աւարտի ուսումը։

Վերջին տարիների հասարակական գործերին ուղղութիւն տվող և կառավարող հոսանքների ազդեցութեան տակ պարտականութեան և իրաւունքի գիտակցութիւնը հասարակութեան մէջ տուող իմաստից շեղվել էր։ Կամաց կամաց շատ հեռուն գընացած այս ուղղութիւնը հասարակական հիմնարկութիւնների լքումն առաջարկեց։ Հեռացան արհամարհված ունևորները, իսկ բարձր աղաղակողները զօրութիւն չունեցան առանց նրանց առաջ տանելու գործը։ Մի շարք այլ հիմնական պատճառներից սկսված տեղատուութիւնը բերեց հասցրեց այնտեղ, որ հոգաբարձութիւնը ստիպվում էր շարունակ փոխարինարար, շուտ վերադարձնելու պայմանով, մուրհակների վերցրած փողերով կառավարել դպրոցը։ իսկ վերադարձնելը, ի հարկէ, կանոնաւոր տանել չէր աջողվում և այդպիսով այդ աղբիւրն էլ ցամաքել էր այն աստիճան, որ 5—6 հարիւր բուբլու բացի առաջ հոգաբարձութիւնը (300 ր. բաց ծածկելը կողմնակի եկամուտներով ծախքի կրճատման նախահաշուում մի կերպ հնար համարելով 500-ի հանդէպ ընդարձակելու նախահաշուում կանգ է առնում) ստիպվում է բաժանմունքները միացնելու ծրագիրը կազմել։

Եւ ահա սրբազանը օգնութեան հասաւ։ Նրա, որպէս դպրոցական գործի գլխի, ներկայ լինելը հաւատ և վստահութիւն ներշնչեց ժողովրդին և նա, սրբազանի առաջին առաջարկին՝ «ընդարձակել դպրոցը, թէ փոքրացնել, միացնելով բաժանմունքները», առանց միջոցների մասին խորհրդակցելու, ձայնի առաւելութեամբ ընդունեց ընդարձակվելը։ Իսկ ունևորը, ոտացած անցեալը և վստահելի իշխանութիւնը գործի գլուխ տեսնելով, ինքնաբերաբար օգնութեան հասաւ։

Տասնեակ տարիներ առաջ Դէօրգիևսկի հայոց եկեղեցուց այստեղի եկեղեցու համար մի քանի հազար բուբլի պարաք էր վերցված։ Երբ խօսք էր բացվում այս պարքի հատուցման կամ կամաց կամաց զեղջման մասին, սրանք միշտ խօսքը կտուրն էին դցում, չը նայելով որ պարտատէրը խիստ լրջութեամբ էր պահանջում։ Այս ժողովում այս կտուրը դցված պարքի խնդիրը տեղանի վրա դրվեց. ժողովականները միաձայն ընդունելով այդ պարքը վճարելու անհրաժեշտութիւնը՝ որոշեցին տարեկան 300 ր. տալ Դէօրգիևսկի եկեղեցուն, իսկ Էջմիածնից տեղիս եկեղեցական կալուածքների կառավարութեան ձեռքում հաւաքված դրամը հէնց որ ստացվի, անմիջապէս կէսը յանձնել Դէօրգիևսկի եկեղեցուն և պարտաւորվել արագ վճարումներով շուտ վերջացնել պարքը։

Ժողովի վերջում կարդացվեց նորերս հանգուցեալ Դաւիթ Դ. Դիւբջանցի ժառանգների գրաւոր դիմումը ծխ. հոգաբարձութեան, որով յայտնում են՝ «եկեղեցուն, ի յիշատակ իրանց հանգուցեալ ծնողի, յանձնում են 500 ր., որպէս անձեռնմխելի դրամագլուխ, որի տոկոսներից տարեկան 25 ր. ծխ. դպրոցում մի որդեգիր պահվի, ծխ. դպրոցի փակվելու դէպքում նոյն 25 բուբլին պէտք է յատկացվի պետական գիմնազիայում սովորող չքաւոր մի հայ աշակերտի»։ Ժողովը գոհութեամբ լսեց։

Հետևեալ օրը երեկոյեան 10 ժամ 26 ըսպէին Մխիթար եպիսկոպոսը Աբրահամ քահ. Շեխենանցի ուղեկցութեամբ գնաց Բաթալբաշինսկ։ Մարդ.

—

Բ ա գ դ ա դ. (Դանձ. դաւ.), 3 յունիսի

Մեր գիւղը, ինչպէս յայտնի է, 1905 թուին աւերվեց թուրքերի ձեռքով և ժողովուրդը ցիր ու ցան եղաւ մեր երկրի զանազան գիւղերում և քաղաքներում։ 1906 թուին ժողովրդի մեծ մասը վերադարձաւ իր մայրենի հողը հերկելու և ապրուստ գտնելու։ Բայց թշուառները, չունենալով ոչ եզ և ոչ արօր ու գութան, մացել էին անճար։ Թիֆլիսի կենտ. Նվաստամատոյց Ցանձնաժողովը տուեց 40 հատ գութան և 25 հոգուն մէկ եզ, որից 7 հատը գութանով էին վար վարում մինչև այժմ։ Բայց 1909 թուից մինչև օրս տիֆը մեծ համաճարակ ա-րեց ժողովրդի մէջ և մինչև օրս էլ շարունակվում է։ Ժողովուրդը չունի կով, գոմէշ և ոչխար, ուստի և զրկված է կաթից, մածնից, իւղից և պանրից։ Այդպիսի պայմաններում հիւանդութիւնն աւելի է ֆնասում, որովհետև ժողովուրդն ուտում է բացառապէս կանաչեղէն, ինչպէս, օրինակ, բանջար, շուշան, փիփերթ, աւլուկ և այլն։

Վերջերս մեր արտերում մուկն էր լոյս ընկել և սաստիկ ֆնասում էր։ Այդ մասին մի քանի անգամ յայտնեցինք պատշաճաւոր վարչութեանը և գեղ ստացանք ու մկներին ցրեցինք։ Բայց ահա մայիսի լոյս 30 ի առ. ժամը 4-ին տեղաց սաստիկ կարկուտ և 10 րոպէում վերջացրեց գիւղիս ժողովրդի մեկ յոյսը։ Ադէտից յետոյ՝ ժողովրդի դրութիւնը վերին աստիճանի խղճալի էր. կանանց ու երեխաների լաց ու կոծը մարդու սիրտ էր ճմլում։ Դիմում են արել պատշաճաւոր իշխանութիւններին, որպէս զի կառավարութիւնը 18,000 ր. պարտք տայ։ Ժողովուրդը, տեսնելով մի կողմից հիւանդութեան անողոք ներկայութիւնը, իսկ միւս կողմից հացի պակասութիւնը, այնքան է յուսահատվել, որ ցանկանում է մի անգամ ընդ միշտ թողնել մեր գիւղն ու հեռանալ ուրիշ տեղը՝ իր ապրուստը հոգալու։ Գ. ք. Տէր Աբր.

—

Ն ո ր-Բ ա յ ա զ է տ, 11 յունիսի

Սրանից ուղիղ 3 ամիս առաջ, մարտի 7-ին, ինչպէս գրած եմ «Մշակի» № 57-ում, մեզանում կայացաւ քաղ. վարչ. նոր անդամների ընտրութիւնը առաջիկայ քառամեակի համար։ Ընտրվածների անունացուցակը, ընտրութեան հետևանքների հետ, քաղ. ուաքը իր ժամանակին ներկայացրել էր Երևանի նահանգապետին ի հաստատութիւն։ Ապա մի ամսից յետոյ նահանգական վարչութիւնից հարց էր առաջարկված նորընտիրների վարքի ու բարքի, նրանց անձնական արժանիքի և պարապմունքների վերաբերմամբ։ Թէ ինչ ձևով էր պատասխանված այդ հարցերին նահանգական տեսչին, այդ մենք չը գիտենք։ Ծակայն այսքանը կարող ենք ասել, որ ամսիս 6-ին թուղթ ստացվեց Երևանի նահանգապետից, որը անհնար է գտել հաստատել մեր նորընտիր վարչութեան անդամներին իրանց պաշտօնում և, բեկանելով այդ ընտրութիւնը, առաջադրել է նորից ընտրութիւններ կատարել՝ քաղ. վարչութեան նոր կազմ հաստատելու համար։ Մօտ ապագայում տեղի կունենայ ընդհանուր հասարակական ժողով՝ նոր վարչութեան անդամներ ընտրելու համար։

Ամառամուտին, ամսիս 9/10-ի գիշերը, անձրևից յետոյ սարերում դարձեալ ձիւն էկաւ։ Ժողովուրդը երկիւղ է կրում, թէ մի գուցէ ժատղաշ բուսականութիւնը ցրտատար լինի, բանի որ հետևեալ լուսնկայ գիշերը սաստիկ ցուրտ էր և պարզկայ։ Բայց միւս օրը լաւ տաք արև եղաւ և ժամամբ փարատեց շատերի կարծիքը։ Առայժմ լաւ եղանակ է։ Գ. Սինանեան

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ*)

—

Մայիսի 29-ին, առաւօտեան ժամը 11-ին, թեմ. դպրոցի դահլիճում կայացաւ թեմ. պատգամաւորական ժողովը փոխ-թեմական Մորէն վ. Մուրադբէգեանի և ատենապետ Գ. Տէր-Պաչատրեանի ներկայութեամբ։

Նախ քան հերթական խնդիրներին անցնելը՝ ժողովի կազմը ստուգելու ժամանակ հարց բարձրացաւ, թէ քանի որ բացակայողներ կան, նիստն արդեօք իրաւական պէտք է համարվի թէ՞ ոչ։ Ժողովի ատենապետը յայտնեց, որ առաջին նիստը բացված է իրաւական թիւ ժողովականների ներկայութեամբ և յաջորդ նիստերին, որպիսի թիւ էլ ներկայ լինի, այնուամենայնիւ ժողովը իրաւական է համարվում։ Ապա ժողովը զբաղվեց դպրոցական սեկցիայի մշակած տեղեկագիր-դեկուցումով և քննութեան առաւ նրա իւրաքանչիւր կէտը և ընդունեց՝

ա) Ի նկատի ունենալով որ արդէն տպագրվում է պաշտօնական պարտադիր ծրագիրը, որ ուղարկվելու է ի գործադրութիւն առաջիկայ սեպտեմբերից՝ այլևս չը զբաղվել ծրագրի հարցով։

բ, Ծխ. դպրոցներում ուսուցչութիւն առնել կարող են միջնակարգ դպրոցից ոչ պակաս կրթական պատրաստութիւն ունեցող անձնաւորութիւններ։ Այս ընդհ. կանոնի պահանջից բացառութիւններ կարող են լինել թեմ. խորհրդի յատուկ որոշումով, որը՝ աչքի առաջ ունենալով այս կամ այն դպրոցի ծաւալը, չքաւորութիւնը, ինչ առարկաների համար ուսուցիչ հրաւիրվելը, այլ և կրթական վերոյիշեալ պահանջին չը բաւարարող թեկնածուի, յատենայն դէպս նուազագոյն որոշ չափով պատրաստութիւն ու մանկավարժական հմտութիւն ունենալը՝ թոյլ է տալիս ուսուցչ. պաշտօն ստանձնելու նաև միջնակարգ դպրոց չաւարտածներին։

Միջնակարգ դպրոց համարվում են՝ գիմնազիա (արական 8 դաս., իգական 7 դաս.), ըէալական, թեմ. դպրոց, առևտր. դպրոց, ճեմարանական դպրոցական բաժին, ուսուցչ. սեմինարիա, Յովհաննեան դպրոց (7 դաս.) և համապատասխան դասընթացք ունեցող այլ դպրոցներ։

Պետական միջնակարգ դպրոց աւարտողները, եթէ աւանդում են հայկական առարկաներ, պարտական են՝ հայոց լեզուից, պատմութիւնից, գրականութիւնից և եկեղեցական պատմութիւնից քննութիւն տալ։

գ) Աւ.-ուսուցիչը պիտի լինի միջնակարգ կրթութիւն ստացած մարդ։ Պետ. միջնակարգ դպրոց աւարտածները կարող են աւ.-ուսուցիչ լինել այդ դէպքում, երբ նրանք քննութիւն են տուել հայկական առարկաներից թեմ. խորհրդի սահմանած յատուկ ծրագրով. իսկ շեղումներ թոյլատրվում են թեմ. խորհրդի հայեցողութեամբ (այս հարցը ընդունվում է ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 7-ի)։ Թեմական խորհրդի և հոգաբարձական կազմերի վրա պարտականութիւն է դրվում առանձին ուշադրութիւն դարձնել աւ.-ուսուցիչների ընտրութեան մասին՝ աչքի առաջ ունենալով նրանց կարևոր և պատասխանատու դերն ու դիրքը դպրոցում։

Հարց է ծագում որոշ սահման դնել դպրոցաւարտների ուսուցչ. պաշտօնի մէջ մտնելու ժամանակաշրջանի նկատումներով, որի մասին ժողովը որոշեց չընդունել ոչ մի սահմանափակում և թողնել դպրոցական մարմինների հայեցողութեանը։

դ) Ցանձնարարվեց թեմ. խորհրդին կազմել թեմի դպրոցներում պաշտօնավարող ուսուցիչ-ուսուցչուհիների մանրամասն ցուցակ՝ մանրամասն տեղեկութիւններով, որպէս զի ապագայում կազմվի արժանաւոր ուսուցիչ-ուսուցչուհիների շտատ։ Այս բոլոր կէտերն անցան միաձայն։ Որոշվեց նոյնպէս ուսուցիչ-ուսուցչուհիների ցանկը տպագրել և ուղարկել դպրոցներին։

Նիստը վերսկսելով՝ կարդացվում է թեմ. տեսչութեան համար կազմված զեկուցումը։ Վէճ առաջացաւ, թէ արդեօք հմուկ է ունենալ շրջանային տեսուչներ և սրանց լրացուցիչ մարմիններ, որի մասին խօսեցին Մ. Տէր-Մինասեան, Հայրապետեան, Զախմախաղեան և հ. Պաչանքեան որպէս գաւառական պատգամաւորներ։ Ժողովը, լսելով թեմ. խորհրդի զեկուցումը թեմ. տեսչութեան մասին, նաև դպրոցական և կառավարչական սեկցիաների եզրակացութիւններն ու որոշումները այս խնդրի վերաբերմամբ, միանգամայն կարևոր և անհրաժեշտ համարելով վիճակային խորհուրդներ ու շրջանային տեսուչներ ունենալու կարիքն ու պահանջը, որոշեց լիազօրել թեմ. խորհրդին հրաւիրել առնուազն երկու թեմ. տեսուչ՝ յանձնելով նրանցից իւրաքանչիւրին մի որոշ շրջան։ Միևնոյն ժամանակ պարտաւորեցնել թեմ. խորհրդին անմիջապէս դիմել վիճակ. խորհուրդների կազմակերպութեանը, որոնց և իրաւունք տալ հրաւիրելու շրջանային տեսուչներ՝ համաձայն թեմ. խորհրդի մշակած և պատգամաւորական ժողովից հաստատված հրահանգի։ Ընդունվեցին թեմ. տեսուչների գործունէութեան մասին դպրոցական սեկցիայի կազմած 4 տեսը, որից յետոյ ժողովը անցնում է դպրոցական կանոնադրութեանը, որի ժամանակ առանձին վիճաբանութիւն է յարուցանում հոգաբարձ. և ուսուցչ. խառն ժողովների խնդիրը, աւ.-ուսուցչի և հոգաբարձ. մարմնի յարաբերութիւնը, որի մասին մտքերի փոխանակութիւնից յետոյ ժողովը որոշեց՝

1) Ոչ-իրաւական համարելով խառն ժողով կոչվածը՝ մերժել նրա գոյութիւնը կանոնադրութեան մէջ։

2) Աւ.-ուսուցիչը մասնակցում է հոգաբարձ. այն ժողովներին, որոնք վերաբերում են դպրոցական խնդիրներին, ձայնի՞ իրաւունքով։

3) Մանկավարժ. խորհրդին մասնակցում է ձայնի իրաւունքով հոգաբարձութեան մէկ ներկայացուցիչը նոյն հոգաբարձուների ընտրութեամբ։

4) Դպրոցների ուսուցիչներին ընտրում է ծխ. հոգաբարձութիւնը աւ.-ուսուցչի կամ տեսչի առաջարկած անձերից և առաջարկում է թեմ. խորհրդի հաստատութեանը՝ ներկայացնելով իւրաքանչիւր թեկնածուի ուսման վկայականի պատճէնը։

5) Աւ.-ուսուցչին, տեսչին և կամ ուսուցիչներին արձակելու դէպքում ծխ. հոգաբարձութիւնն իր պատճառաբանված միջնորդութիւնը ներկայացնում է թեմ. խորհրդին ի տեղեկութիւն, նախապէս իր պատճառաբանված արձանագրութիւնը տեղեկացնելով արձակվելիք պաշտօնեային, որպէսզի սա իր բացատրութիւնը ներկայացնի թեմ. խորհրդին։ Միւս կէտերը ընդունվեցին նոյնութեամբ։

Ուշ լինելու պատճառով ժողովը փակվեց ժամը 3-ին։ Վ. ք. Աղազարեան

(Կը շարունակվի)

*) Տես «Մշակ» №№ 118 և 125.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԻԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ*)

Գր. Ն. Մարրի

—

Այս ամենի համար էլ իմ մէջ հաստատեցել է Անիում հնագիտական ինստիտուտի հիմնադրութեան միտքը քաղաքի և շրջապատի վայրերի հնութիւնների ուսումնասիրութեան, պահպանութեան և սիստեմատիկ պեղումների գործը առաջ տանելու համար։

Այս մտքի իրագործման համար պահանջվում են բաւական զգալի ծախքեր։ Հայ հասարակութիւնը մինչև այժմ նպաստել է Անիի հնագիտութեան աշխատանքներին և, կարելի է հաւատացած լինել, ապագայում ևս չի մոռանայ իր պարտականութիւնը։ Անկասկած պետութիւնն ևս պարտաւոր է ապահովել գիտական և ուսումնական տեսակէտից այն աստիճան անվիճելի կարևոր կուլտուրական ձեռնարկութեան անշեղ զարգացումը, և ես ուզում եմ հաւատալ, որ նա իր կողմից կը նպաստէ դրան իրանից կախված՝ ամեն հնարներով և նոյնպէս այս կամ այն. չափով, նաև նիւթական միջոցներով։ Այս մանաւանդ առաւել ևս ցանկալի է և հեշտ, քանի որ այս դէպքում ոչ թէ հարկաւոր է նոր գործի ձեռնարկել, այլ միայն շարունակել այն, ինչին արդէն հիմք է դրված։ Անիում առաջին հետախուզումների կատարման պատիւը պատկանում է Կայսերական Հնագիտական Մասնաժողովին, որ նպաստեց մեր գրածի զարգացմանը իր հովանաւորութեամբ և իր բարոյական աջակցութեամբ։ Ամենաառաջին անգամ նա ձեռնարկեց 1892—1893 թ. առհասարակ ամբողջ Ռուսական Հայաստանի սիստեմատիկ հետազօտութեան գործին։ Այն տարիներին Անիին բաժին ընկաւ մի քանի հարիւր բուբլի։ Կայսերական Հնագիտական Մասնաժողովի միջոցներից, երբ յատկապէս Անիում աշխատանքները վերսկսվեցին 1904 թ., առաջին տարին յատկացվեց 400 ր., երկրորդ տարին 300 ր., երրորդ տարին 400 ր. և չորրորդ տարին 300 ր.։ Պետերբուրգի Կայսերական Համալսարանի Արևելեան Լեզուների Բաժանմունքի միջոցներից այլևայլ տարիներին ծախսվել է Անիում 543 ր., սակայն հէնց առաջին տարվանից սկսած անընդհատ—այժմ հինգերորդ տարին է արդէն—ամարային հնագիտական արշաւանքների ընթացքում, Անիի պեղումների գործի զարգացման համար հանգանակվել է միանուագ նուիրաբերութիւններով, նաև հայ հասարակութեան, հասարակական հաստատութիւնների կամ մասնաւոր անհատների կողմից պարբերաբար տրված վճարներով և թէ Անիի մասին կարդացած իմ դասախօսութիւններից գոյացած դրամական գումարներով և թէ հրատարակութիւններից ստացված մուտքերով ընդամենը՝ 28,081 ր. 3 կ.։ Այս գումարից առանձնապէս պէտք է ի նկատի առնել Պետերբուրգի հայ եկեղեցիների կալուածների կառավարման խորհրդի կողմից 1905 թ. պարբերաբար տրված նպաստները, ընդամենը 15,300 ր., և 1908 թ. մուտքը՝ դասախօսութիւնների շնորհիւ աւելացած եկեղեցական նպաստի հետ միասին ընդհանուր գումարով մինչև 11,485 ր.։

Եթէ հասարակական դրամներին՝ 28,081 ր. 3 կ.-ին աւելացնենք նաև Կայսերական Հնագիտական Մասնաժողովի և Արևելեան Լեզուների Բաժանմունքի պետական նպաստները, այն ժամանակ ընդհանուր գումարը կը լինի 30,024 ր. 3 կոպէկ։

Այս գումարով—ընդհանրապէս ոչ էլ շատ խոշոր, եթէ բաժանենք նրան 8 ամարային արշաւանքների վրա և ուշադրութեան առնենք նրա ոչ կանոնաւոր հանգանակումը—Անիում աշխատել հիմնական և խոշորագոյն (капитальныя) պեղումները՝ 1) ս. Գրիգորի եկեղեցու, որ թանգարժէք է իր՝ քարի վրա արված հարուստ քանդակներով և XIII դարի որմնակարների բեկորներով (фрагментами фресокъ), 2) թագաւորների ժամանակի՝ Խամբուշենց տոհմի Աստուածածնայ եկեղեցու, և էլի 3) Աստուածածնայ մի եկեղեցու, 4) մի քաղաքի, 5) Աշոտ թագաւորի քաղաքաշէն պարիսպների և շրջապատող քաղաքամասի, 6) Գագիկ I թագաւորի կառուցած յայտնի բոլորաձև տաճարի, որն է եկեղեցական ճարտարապետութեան ամենահետաքրքրական տիպը, և շրջապատող վայրի, 7) Միջնաբերդի թագաւորական պալատի բաւական մեծ մասի, 8) երկու ընդարձակ հիւրանոցների իրանց շքեղօրէն զրուագված (орнаментированныхъ) գլխաւոր մուտքերի բեկորներով, 9) և մի դեռ անհայտանալի և չը պարզված շէնքի չորս բրգաձև աշտարակներով։

Պեղումների շնորհիւ բացվել ու մաքրվել է բաւական հեռաւոր տարածութեամբ մի փողոց, երևի քաղաքի ամենագլխաւոր երակ-փողոցը։

Քաղաքի սահմանից դուրս կատարվել են հեթանոսական գերեզմանատան պեղումները, իսկ շրջակայքում՝ Երերոյք կաթողիկէէին։ Բացի դրանից կատարվել են մի քանի հետախուզական արշաւանքներ, որոնց ժամանակ ևս տեղի են ունեցել փոքր պեղումներ։ Այդ բոլոր աշխատանքների համար ձեռք են բերված բաւականաչափ թւով գործիքներ, ձեռքի սայլակներ (тачка) և այլն, նաև կազմակերպված և վարժված է բանւորների բազմաթիւ մի խմբակ։

Սկզբում անհրաժեշտ իրերի պահպանութեան համար յարմարեցված էր ամենալաւ կերպով պահպանված շէնքերից մէկը, իսկ յետոյ կառուցվեց յատուկ կացարան, որտեղ առանձին-առանձին գտնվում են գրադարան, առանձնատեսակ զրաղմունքների համար և բանւորական սրահ ատաղձագործական և փականագործական արհեստանոցներով և բոլոր պարագաներով։

Անիում աշխատող հնագէտների համար կառուցված է մի տուն, չորս սենեակից բաղկացած, իր առանձին լուսանկարչական արուեստանոցով։

Միջոցներ են ձեռք առնված, գոնէ մասնակի կերպով, պահպանելու համար այն շէնքերը, որոնք սպառնում են փլվելու՝ ս. Առաքելոց եկեղեցու և նրա նախագահան, Հովիփ եկեղեցու և մինարէթի։

Վերջապէս՝ պատրաստված են 700-ից աւելի լուսանկարչական պատկերներ, 150-ից աւելի ջրաներկերով (акварель) ու տուշով նկարներ և ռէստավրացիայի—նախնական վերականգնման—մի մեծ թիւ նախագծերի և պլանների։ Բացի դրանից չափական գործիքներով քաշված է քաղաքի մանրամասն պլանը։

Ես արդէն չեմ խօսում պեղումների մասին կազմած յուշատետրերի մասին, որոնք դեռ ձեռագիր են մնում։

Անկախ դրանից, մասամբ հէնց այդ միջոցներից, մասամբ անհատական հնութիւններին նախանձախնդիր լուսամիտ անհատներին արված դիմումների միջոցով, տրվում է կարողութեան չափ նիւթական նպաստ նաև ճարտարապետ Թորոս Թօքմանեանին, որի ճարտարապետական նկարներից և չափերից պատրաստված ալբոմը գտաւ բարձր գնահատում առանձին ժանտաժողովից, կազմված՝ Գիտութիւնների Կայսերական Ակադէմիայից, նախագահութեամբ մշտական քարտուղար Ս. Ֆ. Օլդենբուրգի, Ակադէմիայի անդամներ Ն. Պ. Կոնդակովից և Կ. Գ. Զալեմանից, Կայսերական Հնագիտական Մասնաժողովի ներկայացուցիչ՝ Ն. Վ. Սուլթանովից (այժմ վախճանված) և Դեռլուեստի Կայսերական Ակադէմիայի ներկայացուցիչ՝ Մ. Տ. Պրեսբրաժէնսկիից։

Նաև ջանքեր են գործ դրված անհատական նիւթերի հրատարակութեան համար, սակայն այդ բանի համար սահմանափակ և սուղ միջոցներ ունենալու պատճառով՝ ստիպված ենք եղել տպագրել այդ՝ առանց սիստեմի այլևայլ հրատարակութիւններում։

Հրատարակչական մասը կազմում է նաև այն բանից, որ դրանում շատը անձնական է, այսինքն գրեթէ բոլոր գրութիւնները կամ երկերը մի մարդու են պատկանում։ Անիի հնագիտական ինստիտուտը ի միջի այլոց կը ծառայէ նաև՝ իբրև աւելի նպատակայարմար կազմակերպված մի հաստատութիւն՝ նկարագրութիւնների և կուտակված նիւթերի հրատարակութիւնների համար, դէպ իրան քաշելով ձեռնհաս գիտնականների այս կամ այն մասնագիտական հարցերի ուսումնասիրութեան և նաև ապագայի վերաբերմամբ հարկաւոր մասնագէտների պատրաստութեան համար։

Մեր այս ամեն ասածի հիման վրա, պարտք եմ համարում դիմել Գիտութիւնների Կայսերական Ակադէմիայի Խորհրդին այս առաջարկութեամբ։ Անիում հնագիտական ինստիտուտի հիմնադրութեան մտքին մեր կողմից ամենայն ջերմեռանդութեամբ համակրելով՝ ծխատէր Ն. ք. Աբրահամեանցը բացատրեց ժողովրդին եկեղեցու և ուսումնարանի նշանակութիւնը։ Քահանան չը մոռացաւ ի միջի այլոց խօսելու թղթախաղի դէմ, որը խոր արմատ է գցել մի որոշ խմբի մէջ։ Տէր-հօր քարոզը լաւ տպաւորութիւն թողեց ժողովրդի վրա։

Օրհնութեան արարողութեանը ներկայ էր տեղիս հայ գաղութի հաւիւ $^1/_3$ մասը...

Այդ օրվայ հանդիսի առիթով մատաղ կար պատրաստված. ցանկացողները մօտեցան մատաղին և ամեն մէկը մէկ կտոր խորոված և մի բաժակ գինի խմելով ցրվեց։

Այս երկրորդ մատաղն է, որ սարքում են՝ չը գիտենք ինչու համար։ Եթէ չենք սխալվում, այս տարի մատաղի համար ծախսված է 200 ր.։ Մեր կարծիքով՝ դա մի աւելորդ ծախս է, որն անվում է ժողովրդի կօպէկներով կազմված գումարից։ Ժամանակ է հասկանալու, որ չէ կարելի ժողովրդի կօպէկները անօգուտ մատաղների վրա ծախսել։ Աւելի լաւ չէր լինի, եթէ մատաղի կազմակերպողները այդ 200 ր. յանձնէին նոր բացվելիք ուսումնարանին, որտեղ այդ գումարով կարելի կը լինէր վճարել առնուազն 20 չքաւոր աշակերտի թոշակ։ Բիչ բան չէ 20 երեխայի փրկել փողոցից և հնարաւորութիւն տալ ուսում առնելու։ Պ. Մանուչարեանց

—

Պ ե ա տ ի գ օ ր ս կ, 5 յունիսի

Մայիսի 31-ին այստեղ ժամանեց Ատրպատականի թեմի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսը։

Սրբազանը, ծանօթանալով տեղիս եկեղեցական, դպրոցական գործին, յունիսի 2-ին կայացրեց ծխական ընդհանուր արտակարգ ժողով։

Դպրոցի նախահաշիւը նախ և առաջ ենթարկեց ժողովի քննութեան, որը կազմված էր երկու առաջարկութիւնից, այն է՝ որ կամ հոգաբարձութիւնը, սուղ միջոցներից բարիված, դպրոցի ելքը կրճատէ՝ երկրորդ և երրորդ բաժանմունքները միացնելով, և կամ եթէ հասարակութիւնը օգնութեան գայ՝ ընդարձակելու դպրոցը, աւելացնելով չորրորդ բաժանմունք՝ միացած երրորդի հետ։ Ձայնի բազմութեամբ ընդունվեց դպրոցի ընդարձակման առաջարկը և հաստատվեց նախահաշիւը 2355 ր. ելումտուրքով։ Այս նախահաշուից բաց էր մնում 535 ր., որի համար ժողովականներից ոմանք կամաւոր նուիրաբերութեամբ օգնութեան հասան և ստորագրութիւնը հասաւ մօտ 700 ր.։ Ուրեմն եկող ուսումնական տարում բացվելու է չորրորդ միացեալ բաժանմունք։ Ուրախալի է, որ դպրոցի դասընթացը երկարելով՝ բացառապէս չքաւոր դասակարգի երեխաների կրթարան մեր դպրոցը հնարաւորութիւն կը տայ նրանց աւելին սովորելու։

Պէտք է նկատել մի հանգամանք, որ դպրոցից երեխաները դիմում են, շատ քիչ բացառութեամբ, քաղաքային օրիորդաց և տղայոց դպրոցները, կամ անմիջապէս մտնում են արհեստի, կամ դառնում են խանութի աշակերտ։

Մնողները ստիպվում են օր առաջ հաց աշխատող դարձնել երեխային, կամ պատրաստելով աւելի շուտ տեղաւորել պետական դպրոցում։ Այստեղ ոչ նմանելու, ոչ ուրիշից յետ չը մնալու և ոչ ցուցամոլութիւնից է այդ առաջ գալիս, այլ տնտեսական պայմաններն են, որ ստիպում են հնար որոնել, որդուն հասեմատական աւելի աշխատող դարձնելու։

Եթէ հոգաբարձութիւնը հնարաւորութիւն գտնէ դպրոցը երկդասեանի վերածել 5—6 տարվայ դասընթացով, պարտաւորական դարձնելով և մի որևէ արհեստ, օրինակ՝ կօշկակարութիւն, դերձակութիւն, հիւսնութիւն և այլն, իսկ օրիորդների համար կարու ձև, այն ժամանակ ծնողները սիրով երեխային կը թողնեն, որ աւարտի ուսումը։

Վերջին տարիների հասարակական գործերին ուղղութիւն տվող և կառավարող հոսանքների ազդեցութեան տակ պարտականութեան և իրաւունքի գիտակցութիւնը հասարակութեան մէջ տուող իմաստից շեղվել էր։ Կամաց կամաց շատ հեռուն գընացած այս ուղղութիւնը հասարակական հիմնարկութիւնների լքումն առաջարկեց։ Հեռացան արհամարհված ունևորները, իսկ բարձր աղաղակողները զօրութիւն չունեցան առանց նրանց առաջ տանելու գործը։ Մի շարք այլ հիմնական պատճառներից սկսված տեղատուութիւնը բերեց հասցրեց այնտեղ, որ հոգաբարձութիւնը ստիպվում էր շարունակ փոխարինարար, շուտ վերադարձնելու պայմանով, մուրհակների վերցրած փողերով կառավարել դպրոցը։ իսկ վերադարձնելը, ի հարկէ, կանոնաւոր տանել չէր աջողվում և այդպիսով այդ աղբիւրն էլ ցամաքել էր այն աստիճան, որ 5—6 հարիւր բուբլու բացի առաջ հոգաբարձութիւնը (300 ր. բաց ծածկելը կողմնակի եկամուտներով ծախքի կրճատման նախահաշուում մի կերպ հնար համարելով 500-ի հանդէպ ընդարձակելու նախահաշուում կանգ է առնում) ստիպվում է բաժանմունքները միացնելու ծրագիրը կազմել։

Եւ ահա սրբազանը օգնութեան հասաւ։ Նրա, որպէս դպրոցական գործի գլխի, ներկայ լինելը հաւատ և վ

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Պետերբուրգ, 14 յունիսի

Նախագահում է Ակիմովը։

Կարդացվում է Բարձրագոյն հաստատված օրինագծերի ցուցակը։ Յոտնկայսված օրինագծերի մասին հարցվեց խորհրդի վախճանված անդամ բարոն Տաուբէի յիշատակը։

Ընդունվում են առանց փոփոխութիւնների 29 մանր օրինագծեր։

Խորհուրդը անցնում է ֆինլանդական օրինագծի յօդուածային քննութեան շարունակութեանը։

Մանուխինը պնդում է 2-րդ յօդուածի 5-րդ կէտը դուրս հանելու վրա, գտնելով որ այդ կէտը հակասում է Հիմնական Օրէնքների 2-րդ յօդուածին։ Հռետորի կարծիքով՝ Ֆինլանդիայի կառավարութեան հիմնական սկզբունքները առանձին կանոնադրութիւններով հանդերձ և կառավարութեան բովանդակ ներքին կազմը մինչև այժմ որոշվում էին Գերագոյն իշխանութեամբ։ Ներկայ օրինագիծը բնաւ չէ փոխում և չէ կարող փոխել յիշեալ կարգը որոշող օրէնդրութիւնը։

Գրիմմը, պաշտպանելով Մանուխինի առաջարկութիւնը, յայտնում է, որ քննվող կէտով խախտվում են ոչ միայն ֆինլանդական օրէնքները, այլև Հիմնական Օրէնքների 2 րդ և 8-րդ յօդուածները և թէ այն մանիֆէստը, որի հիման վրա ներկայ օրինագիծը ներկայացված է օրէնդրական հաստատութիւններին։ Երբ այդ կէտը ընդունվի, հռետորի կարծիքով, կը վտանգվի ֆինլանդական սահմանադրութիւնը։

Մանուխինի առաջարկութիւնը մերժվում է։

Հինգերորդ կէտը ընդունվում է Դումայի խմբագրութեամբ։

Վեցերորդ կէտի քննութեան ժամանակ Գրիմմը ասում է, որ հինգերորդ կէտը ընդունվելուց յետոյ նա աւելորդ է գտնում պնդել յետագայ ուղղումների քննութեան վրա, որովհետև պարզ տեսնում է, որ բացի անարգված բիւջէից լինում են նաև ուղղումներից անարգված օրինագծեր։

Նախագահը, ընդհատելով հռետորին, առաջարկում է այդ ոգով այլևս չը շարունակել։

Գրիմմը յայտնում է, թէ ի նկատի ունենալով որ անյուսալի է յետագայ ուղղումների քննութիւնը, նա վերցնում է նրանց յետ։

Գրիմմի այս յայտարարութիւնից յետոյ Ստախովիչը և խորհրդի ձախ թևի միւս ներկայացուցիչների մեծ մասը հեռանում են դահլիճից։

6-րդ և 7-րդ յօդուածներն ընդունվում են Դումայի խմբագրութեամբ։

8-րդ յօդուածը նոյնպէս, որ արդարադատութեան մինիստրի կողմից հանդիպում է բուռն պաշտպանութեան և վերաբերում է այն խնդրին՝ թէ ֆինլանդական քրէական կարգը գործերը քննելու են ռուսական ընդհանուր դատավարութեամբ, ընդունվում է Դումայի խմբագրութեամբ։

Առաջին բաժնի բոլոր յօդուածներն այնուհետև ընդունվում են Դումայի ընդունած ձևակերպումներով։

Առանց վիճաբանութիւնների ընդունվում են երկրորդ և երրորդ բաժինները, յետոյ օրինագիծն ամբողջապէս՝ ձայների ճնշող մեծամասնութեամբ՝ ընդունվում է առանց որևէ փոփոխութիւնների Դումայի խմբագրութեամբ։ (Հ. Գ.)

հաւանութիւն տալ թէ քաղաքի հնութիւնների և թէ շրջապատող վայրի—հին Շիրակ գաւառի—սահմաններում գտնվող հնութիւնների սիստեմատիկ պեղումների, նրանց ուսումնասիրութեան և պահպանութեան համար և, առնելով ինչպէս այժմեան աշխատանքները, նոյնպէս և ապագայ անհրաժեշտ հնագիտական ինստիտուտը իր հեղինակաւոր հոլանաւորութեան և հսկողութեան տակ, ձեռնարկել կարևոր միջոցներին նրա իրականացման համար, այսինքն. 1) առաջին՝ կանոնադրութեան քննութեան և վաւերացման համար, որի ծրագիրը սրա հետ կցված է, ընտրել Մասնաժողով, որի անդամների թւում անպատճառ պէտք է լինեն օրդինար ակադեմիկոս Վ. Վ. Լատիշեվը և Կայսերական Հնագիտական Մասնաժողովի բախագահի օգնականը, բ) երկրորդ՝ կանոնադրութիւնը, վերջնականապէս մշակելուց յետոյ, ուղարկել հաստատելու համար օրէնդրական կարգով և միջնորդել տալ իւրաքանչիւր տարի պետական գանձարանից 5000 ր. նպաստ, իսկ նախօրօք բանակցել Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի հետ, առնելու համար նրա համաձայնութիւնը՝ ընդունել Անիի հնագիտական ինստիտուտի պատուաւոր նախագահի կոչումը և նաև առնալու համար համապատասխան ցուցմունքներ, եթէ նա կը կամենայ մտցնել կանոնադրութեան մէջ այլ և այլ լրացումներ գիտական գործի օգտի համար, և տեղեկանալու նոյնպէս Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի համաձայնութիւնը՝ ընդունելու համար ինստիտուտի պատուաւոր հոգաբարձուի կոչումը, գ) երրորդ՝ յանձնարարել ինձ միաժամանակ բանակցութիւններ վարելու հայկական հասարակական հիմնարկութիւնների և գործիչների հետ, որոնք կարող են օգտաւետ լինել Անիի ապագայ հնագիտական ինստիտուտի միջոցների ուժեղացման տեսակէտից՝ նպատակների և նուիրաբերութիւնների կանոնաւոր ստացման գործի կազմակերպութեան համար՝ և բանակցութիւնների հետևանքի մասին զեկուցել խորհրդին։

Վերջաբանում երկու նկատողութիւն կանոնադրութեան նախագծի վերաբերեալ. 1) ծրագրված կազմակերպութեան մէջ չէ մուծված այն գումարների դասաւորումը, որոնք, հաստատ յոյս ունենք, ապագայում ևս կը նուիրաբերվեն հասարակական հիմնարկութիւնների և մասնաւոր անհատների կողմից. այդ պատճառով էլ մի քանի շահաւէտ ծախքեր կարող են երևալ ոչ բաւարարաչափ ապահովված. 2) որովհետև գոյութիւն ունի օրէնք, որ Կայսերական Հնագիտական Մասնաժողովին է վերապահում կայսրութեան շրջանում պետական և հասարակական, նաև այլևայլ հաստատութիւններին պատկանող հողերի վրա պեղումներ կատարելու թոյլտութեան բացառիկ իրաւունքը, և որը միաժամանակ պարտաւորեցնում է ասենքին «պեղումների ժամանակ գտնվող թանգարժէք և գիտական տեսակէտից առանձնապէս կարևոր իրերը» ուղարկել հէնց նոյն պետական հաստատութեանը՝ «Ներկայացնելու համար Բարձրագոյն հայեցողութեան» (տես՝ Բարձրագոյն հրաման 1889 թ. մարտի 11-ից), այդ պատճառով ևս կանոնադրութեան նախագիծը արդէն ներկայացրել եմ Կայսերական Հնագիտական Մասնաժողովի քննութեանը, որը առաջարկեց մտցնել մի քանի մեծ մասամբ խմբագրական ուղղումներ այն յօդուածների մէջ, որոնք շօշափում են նրա իրաւունքները, իսկ իր կողմից յայտնեց լիակատար համակրանք մեր ձեռնարկութեան։

Թարգմ. Ա. Նազարէթեան

ԽՕՂԵՐԱ

14 յունիսի

Պետերբուրգ.—Հաղորդվում է ի գիտութիւն ընդհանուրի, որ Բոստովում տեղի ունեցած խօլերայի 1255 դէպքը մի օրվանը չէ, այլ յունիսի 5—11-ը։

Դօնեան Զօրաց և Կուբանի շրջանները, Ձերնիդօվի նահանգը, Մինսկի, Բոբրուսկի, Իգուժենի, Մոգիլևի, Պլինսկի, Բէշեցկի և Սլուցկի գաւառները յայտարարված են խօլերայից անվնաս, Վօրոնէժի, Կուրսկի, Ստաւրոպոլի նահանգները և Թերեքի շրջանը՝ վտանգաւոր։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Յունիսի 15-ին Կովկասի Փոխարքայի օգնական սենատոր Վատացին մի քանի պաշտօնեաների ուղեկցութեամբ մեկնեց Երևանի նահանգի Կողբ գիւղը դիտելու աղահանքերը և տեղում պարզելու այն պայմանները, որոնք անհրաժեշտ են ծրագրված Արաքս-Կողբ երկաթուղագծի կառուցման համար։

◆ Թիֆլիսի նահանգական դատարանի նախագահ Ն. Կուպրիցինը մեկնեց Թէլաւի և Սղնախի գաւառները՝ քննելու տեղական դատական մարմինների գործավարութիւնը։

◆ Թիֆլիսի նահանգապետը հաստատեց քաղաքային դումայի որոշումը՝ Թիֆլիսում էլեքտրական կայարան կառուցանելու համար 575,000 ռուբլի յատկացնելու մասին։

◆ Յունիսի 12-ին կայացաւ քաղաքային վարչութեան և ֆինանսական մասնաժողովի նիստը ոստիկանապետի մասնակցութեամբ՝ հացթիների սեղանը քաղաքի իրաւասութեանը յանձնելու հարցի համար։ Որոշվեց այդ հարցի քննութիւնը առաջադրել քաղաքային դումային, որը քանիցս մերժել է այդ։

◆ Թիֆլիսի VI քաղաքամասում, Եշխ. Սուվորովի կալուածքում, երևացել է նոր հանքային աղբիւր։

◆ Ֆինանսների մինիստրութիւնը դժուարացաւ գոհացումն տալու Թիֆլիսի քաղաքային դումայի միջնորդութեան՝ ազատել Թիֆլիս քաղաքն այն 58,310 ռուբլի գումարից, որ կազմում է տեղական ոստիկանութեան ծախքի կէսը 1909 թ-ի ընթացքում։

◆ Միխայլովո կայարանում վերջերս մի խումբ անյայտ չարամիտներ սրան-նրան սկսել են սպառնական նամակներ յղել գրամի պահանջով։ Մօտ օրերս, Նիկիֆոր Մամադվարիշվիլի քահանայի ցուցմունքով, ժանդարմները դարան մտան և նամակի պատասխանը ստանալու եկած անյայտ երիտասարդի վրա սկսեցին կրակել, սակայն վերջինս, վիրաւորելով ժանդարմներից մինին, կարողացել է փախչել։

◆ «ԲէՍՆ»-ը այս տողերն է նուիրել նորոգ հանգուցեալ հրապարակախօս Ա. Ն. Կոստէնիկեանի թաղման հանդիսին.

«Յունիսի 9-ին կայացաւ յանկարծահաս եղած Արտէմ (Յարութիւն) Նազարեան Կոստէնիկեանի թաղումը։ Առաւօտեան ժամը 10 ի մօտերը հանգուցեալի բնակարանում ժողովվեցին ծանօթները և ազգականները։ Կատարվեց հոգեհանդէստ, յետոյ դագաղը դուրս տարան Ա. Ն.-ի բարեկամները և դրին դիակառքի վրա։ Դագաղի վրա դրված էին պսակներ «ԲէՍՆ» լրագրի և «Современное Слово»-ի խմբագրութիւնների կողմից, այդ լրագրերների գրատեսակի ծառայողների կողմից և այլն։

«Դագանդէսը դիտեց Նէվայի պրօսպէկտով դէպի հայ-լուսաւորչական եկեղեցին, ուր մատուցվեց պատարագ, որին ներկայ էին հանգուցեալի ընտանիքը, «Запросы Жизни» թերթի ընկեր-աշխատակիցները, «Рѣчь»-ի խմբագիր Գէսսէնը, Գ. Ֆայլբօրկ, Լ. Բուխ, Ր. Բլանկ, Վ. Պօրտուգալով, «Наша Жизнь»-ի նախկին աշխատակիցներից մի քանիսը և այլն։ Հոգեհանգստից յետոյ, դիակառքը հանգուցեալի մարմնով դիմեց Սմոլենսկի գերեզմանատունը, ուր Ա. Ն.-ի աճիւնը յանձնվեց հողին»։

◆ Ստացանք Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործ. Ընկ. 1909 թ. գործունէութեան հաշիւը, որից քաղուածօրէն բերում ենք հետաքրքիր տեղեկութիւնները ընկերութեան արհեստանոցների մասին. «Վարչութիւնն անցեալ տարվայ ընդհանուր ժողովում յայտնեց, որ 1908 թ. սեպտեմբեր ամսից ընդարձակել է իր գործունէութիւնը, բացանելով գուլբայագործական արհեստանոց։ Այդ արհեստանոցը հետզհետէ աւելի առաջ է գնում. ինչ վերաբերում է պատուէրներին, միշտ այնքան է լինում, որ նոյնիսկ հնարաւորութիւն չէ լինում ժամանակին կատարելու, իսկ աշակերտուհիների թիւը առժամանակ համեմատաբար քիչ է. դրա պատճառը կայանում է նրանում, որ ամէն մի մեքենայի վրա կարող են աշխատել միայն 2 հոգի, և որովհետև արհեստանոցն ունի ընդամենը 4 մեքենայ, ուստի աշակերտուհիների թիւն էլ շատ սահմանափակ է. այդ արհեստանոցում այժմս աշխատում են միայն 10 հոգի, որոնցից 1-ը վարպետուհին է, իսկ միւսները աշակերտուհիներ կամ գուլբայագործութեան դասընթացն աւարտածներ, որ շարունակում են օրավարձով աշխատել։ Ամբողջ դասընթացն անցնելու համար փոքր աշակերտուհիները (13—14 տարեկան) մնում են մի տարի, և ձրի են սովորում, իսկ հասակաւորները կարող են սովորել և 6 ամսում, վճարելով 5 ր. ամսական՝ անցնելով ոչ միայն գուլբայագործութիւնը, այլ և այնն տեսակի բարդ գործուածքներ, մանկական զգեստներ, մեծերի և երեխաների վերնազգեստներ, գլխարկներ և այլն։ Անցեալ տարվայ ընդհանուր ժողովի որոշմամբ 1909 թ. սեպտեմբերի 4-ին վարչութիւնը ձեռնարկեց և գլխարկներ շինելու արհեստանոցի բացմանը։ Այս արհեստանոցում արդէն սովորում են 20 հոգի օրիորդներ և կանայք տեղեանք դասակարգից՝ 15 30 տարեկան հասակի։ Վարպետուհի հրաւիրված է մի օրիորդ, որ մինչ այդ աշխատում էր Թիֆլիսի ամենայայտնի արհեստանոցներից մէկում. նա ստանում է տարեկան 420 ր.։ Աշակերտուհիները սովորում են ձրի և դասընթացը շարունակվելու է 2 տարի։ Մի քանի ամսվայ փորձը ցոյց է տալիս, որ այս գործը ևս ունենալու է աջողութիւն, տալով խեղճ դասակարգի ձեռքը մի նոր արհեստ։ Որոշված էր սկսել և կօշկակարութեան արհեստը, բայց վարչութիւնը ի նկատի ունենալով ընկերութեան նիւթական սուղ միջոցները, որոշեց առժամանակ յետաձգել»։

◆ Թիֆլիսի վրայով Բաթայիս մեկնեցին այս օրերս Պետական Դումայի անդամներ Գեգեչկօրին և Զխէիձէն։

◆ Կովկասեան գլխաւոր իշխանութիւնը թոյլ տուեց խաղալ Կովկասի բեմերի վրա Կ. Մինկօվսկիի 1 գործ. «Սիրոյ ոյժը» ռուսերէն դրամատիկական էտիւդը։

◆ Դուբիայում, ինչպէս հաղորդում են «Зак.» լրագրին, յունիսի 7—12 ը ամենուրեք եղել են հեղեղներ և կարկուտ, որոնցից փչացել են բանջարանոցները և դաշտերը։ Մօտակայ լեռներում եկել է ձիւն։ Վնասները մեծ են։

◆ Բագուում այս երեք օրս խօլերայի դէպքեր տեղի չեն ունեցել։ Բալաքարիի հիւանդանոցում պառկած է մի հիւանդ։

◆ Ժողովրդական հաւասարանի օգտին Մուշայիդում մայիսի 27-ին կայացած զբօսանքից ընդհանուր մուտք է եղել 1280 ր. 37 կ., ծախք՝ 649 ր. 50 կ., զուտ արդիւնք մնացել է 630 ր. 87 կ.։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ի լրումն «Մշակի» երէկվայ համարում տպված լուրի՝ II փոխադարձ վարիի ընկերութեան մէջ տեղի ունեցած դէպքի մասին, ոստիկանական տեղեկութիւններից երևում է, որ երիտասարդը սկզբում իրան անուանել է Սարգիս Գրիգորեան Կարապետեանց, 21 տարեկան, Բօրչալուի գաւառից, բայց յետոյ քննութիւնից երևացել է, որ նա Նոր-բայազէտցի Վահան Մամիկոնեանն է, 21 տարեկան, առանց որոշ պարապմունքի։

◆ Յունիսի 14-ին, երեկ. ժ. 8 և 35 րոպէին, 1-ին կովկասեան սապ. բատալիոնի զինուոր Վասիլի Աւօտորցէվը ցէյխաուզի մօտ անզգուշութիւնից կրակից իր ձեռքի հրացանից, գնդակը կպաւ առաստաղին և ոչ ոքի չը վնասեց։ Քննութիւնը կատարվում է զինուորական իշխանութեան ձեռքով։

◆ Յունիսի 14-ին ձերբակալվեց Պարսկաստան աքսորված և այնտեղից փախած պարսկահպատակ Յովհաննէս Զուրաբեանը, որ այժմ պատասխանատուութեան կենթարկվի քր. պատժ. 63-րդ յօդուածով։

◆ Յունիսի 14-ին VII քաղաքամասում շուրջկալի ժամանակ ոստիկանութեան պաշտօնեաները կալանաւորեցին 35 անգործ մարդու։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

«ՎԵՐԱԲՆՆԻՉԸ» ԹԷՀՐԱՆՈՒՄ ՊԱՐՍԿԵՐԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ

Շնորհիւ դերասանուհի և պարուհի տ. Արմէն Օհանեանի եռանդի և ջանքերի, որ հիմք դրեց Թէհրանում պարսկական ազգային թատրօնի, տեղի ունեցաւ արդէն առաջին կանոնաւոր ներկայացումը շահերի մայրաքաղաքում և խաղացվեց «Վերաբընիչ» կօմ. պարսկերէն թարգմանված։

Ահա թէ ինչ է հաղորդում այդ ներկայացման մասին Թղթակից Մ. Կրինսկին «Театръ и Искусство» շաբաթաթերթի 23-րդ համարում։

«Վերաբընիչ» կօմէդիայի թարգմանութիւնը կատարել է երիտասարդ պրինց Նաղիբ-Միրզան, արտաքին գործերի մինիստրութեան թարգմանը։ Թարգմանութիւնը արված է առանց կրճատումների, միայն եկեղեցին անուանված է մէչէդ, իսկ ռուբլիների տեղ Ալեստակօվը ստանում էր «թումաններ»։ Այնպէս որ պարսկական Ալէստակօվին աջողվեց երկու անգամ աւելի մեծ գումար կորզել, քան ռուսականին, որովհետև մի թումանը հաւասար է ռուսական երկու ռուբլուն։

Բաղաքապետի կնոջ դերը խաղաց պարսկերէն իմացող մի հայուհի, իսկ դատեր դերը՝ տ. Արմէն Օհանեանը։ Դերերը շատ լաւ էին դերակատարները սերտել։ Ամենից լաւ խաղաց քաղաքապետը. վատ չէին Դօրչինսկին և Բօրչինսկին։ Ալեստակօվը սկզբում շփոթվում էր և քաշվում, սակայն վերջում ընտելացաւ և աջող տարաւ իր դերը. անսամբլը լաւ էր։ Իբրև բոլորովին նոր գործ, ներկայացումը զերծ չէր նաև թերութիւններից։ Օսիպի սաժենանոց բեխերը հէնց խաղի սկզբից ընկան յատակի վրա, որ առաջացրեց հանդիսատեսների մէջ անչափ ծիծաղ և քրքիջներ։ Ալեստակօվի սենեակի դուռը ոչ մի կերպ չէր ուզում ընկնել և որպէսզի Բօրչինսկին իր քթի վերքի պատճառը հասկացնէ, բռունցքով իր քթին հարուած տուեց։ Քաղաքապետը իր դատեր ամուսնութեան օրհնութիւնը կատարեց մահմեդական կարգով, ծածկելով դատեր գլուխը գլխարկով։ Ալեստակօվը հայելու առաջ իր մազերը ուղղում էր զգեստներ մաքրելու ահագին խոզանակով։ Համբոյրները կատարվում էին հասարձայն մահմեդական սովորութեան՝ համբուրում էին ձեռքերը և ոչ շրթունքները։ Դերժիմօրդան բեմ երևաց աւստրիական սերժանտի տարազով և կապոյտ կէպին գլխին։

Ահա մի ինտելիգենտ պարսկի կարծիքը՝ կազմված վերոյիշեալ ներկայացման ազդեցութեան տակ։

«Հէնց այնպէս, ինչպէս մեզ մօտ է,—յայտնեց նա,—Պարսկաստանը կաշառքների կլասիկ երկիր է ասացուածին պէտք է աւելացնել նաև Ռուսաստանը։ Ես շարունակ աչքս չէի հեռացնում բեմից և մեծ ուշադրութեամբ հետևում էի պիէսին. ես գործող անձանց մէջ որոնում էի գոնէ մի ազնիւ, անկաշառ մարդ, և միայն վերջում տեսայ նրան։ Դա ժանդարմն էր, որ յայտնեց իսկական վերաքննիչի գալստեան մասին»։

Թատրօնում ժողովված հոծ հասարակութիւնը բուռն ոգևորութեամբ և խանդավառ ցոյցերով գնահատեց ներկայացման կազմակերպողներին և դերակատարներին, իսկ տ. Արմէն Օհանեանին ուղղակի «թաղեցին» ծաղիկների մէջ, իսկ վերջում մատուցին նրան մի թանգագին բրօշ, ադամանդներով զարդարված։

Թատրօնում ներկայ էին գրեթէ բոլոր մինիստրները, պարսկական բարձրաստիճան իշխանական դասակարգը, պարլամենտի պատգամաւորները և նախագահ՝ Մօստեշար-ուդ-Դովլէն։

Թղթակիցը վերջում ցաւ է յայտնում, որ ռուսներ շատ քիչ կային ներկայացման, իսկ պաշտօնական Ռուսաստանը միանգամայն բացակայում էր։ Ա. Ն.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յ. Յակոբեան. «Նոր առաւօտ» (պօէմ), Թիֆլիս, 1910, գինն է 15 կօպէկ։

«Նոր առաւօտը» սխալմամբ անուանվել է պօէմ։ Դա աւելի նման է «Բանաստեղծի խորհրդածութիւնների», քան պօէմի։

«Նոր առաւօտը» բաղկացած է տասներկու գլուխ ոտանաւորներից։ Առաջին հինգ գլուխը երգում են բանաստեղծի սէրը, յոյզերը, տրամադրութիւնները։ Վեցերորդ գլխից մինչև տասներորդը երգված են գործարանական աշխատաւորի կեանքը իր ընտրոյ գծերով և ուղեկից երևոյթներով։ Վերջին գլուխները լրացնում են բանաստեղծի խորհրդածութիւնները։

Յակոբեանը զգալի կերպով կատարելագործել է տեխնիկան և ազատօրէն ու աջող ձևակերպում է իր խոհերն ու զգացմունքները։ Ոտանաւորները կարդացվում են տրիբրութեամբ և նրանց մէջ կան ներդաշնակութիւն և պատկերաւոր արտայայտութիւններ։ Բայց ամբողջացում չը կայ բանաստեղծութեան զանազան մասերի մէջ, ուստի նրա առանձին մասերը կրում են ինքնուրոյն հետաքրքրութեան բնաւորութիւն և գուցէ յօրինվել են նոյնպէս զանազան տրամադրութիւնների տակ զանազան ժամանակներում։

«Նոր առաւօտի» առանձնայատկութիւնը նրա այն գունաւորութիւնն է, որ առաջացել է հեղինակի հիմնական տրամադրութիւնից և աշխարհահայեցքից՝ վերաբերեալ հասարակական և դասակարգային նրա ըմբռնումներին և դաւանանքներին։ Ա. Ք.

Լէօնիդ Անդրէեվ. «Անաթէմա», թարգմ. Ա. Յ., Թաւրիզ, 1910, գինն է 80 կօպէկ։

«Անաթէման», ինչպէս յայտնի է, Լէօնիդ Անդրէեվի նորագոյն աշխատութիւններից մէկն է։ Նա փիլիսօփայական մի դրամա է եօթն պատկերներով։ Այդ դրաման այս ձևու ներկայացվեց մի քանի անգամ Թիֆլիսի Արտիստական թատրօնում, գրաւելով հանդիսականների մեծ բազմութիւն դէպի թատրօն։

«Անաթէման» հրատարակվել է Թաւրիզում։ Այդ կողմից դա զրական մի չեղած նորութիւն է, որովհետև մենք սովոր չենք Թաւրիզից ստանալ այդ տեսակ հրատարակութիւններ։

Թարգմանութիւնը ընդհանրապէս բաւարար է։ Կան անհարթութիւններ և խօսակցական լեզուի անհամապատասխան արտայայտութիւններ, բայց առ հասարակ նը-կատվում է թարգմանչի կողմից ուշադիր վերաբերմունք դէպի իր ստանձնած գործը։

«Անաթէմայի» թարգմանութիւնը յատենայն դէպս աւելացնում է մի գեղեցիկ հատոր հայ մատենադարանի մէջ։ Ա. Ք.

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Էմիլ Բերտրանի «Նուպար փաշա», թարգ. Մեսրոպ Նուպարեանի, կ. Պոլիս, 1910 թ., էջ 86, գ. 5 դրշ.։ 2) Ատրպետի «Рахимъ-Ханъ сардаръ», Ալէքսանդրօպոլ, 1910 թ., էջ 40 գինը 20 կ.։ 3) Լէման Հաուպտի «Հայաստան երբեմն և այժմ», թարգ. Իս. Յարութիւնեանի, Թիֆլիս, 1910 թ., էջ 41, գ. 20 կ.։ 4) Ս. Սապաև-Գիւլանի «Հերդեր և իր քաղաքական հայեացքները», կ. Պոլիս, 1910 թ., էջ 32, գ. 100 փարա։ 5) Յ. Դաղբաշեանի «Полный Армяно-Русскій Словарь», III պրակ (Դաշտ—Խաչկուց), էջ 209—336. Թիֆլիս, 1910 թ.։ 6) Դպիր Քամալեանց Ս.-ի «Կրօն» (բարոյախօսական առակներ և Յիսուսի կեանքից պատմուածքներ՝ I բաժանմունքի աշակերտների համար), Թիֆլիս, 1910 թ., էջ 42, գ. 15 կ.։ 7) Վ. Տ.-Աբր. «I Լիրիկական պօէզիա, II Դիդակտիկական պօէզիա», Բագու, 1910 թ., էջ 32, գ. 20 կ.։ 8) «Ուղեցոյց գիւղացի կօպերատորին», հրատ. բժ. Ա. Բուդուղեանի, Թիֆլիս, 1910 թ., էջ 120, գ. 25 կ.։ 9) «Դրպրոցական չարիքներ և կեղծված փաստաթղթեր» (Շուշու թեմ. դպրոցի 1906—7 ուսումնական տարվայ խառնակութիւնների շուրջը), Էջմիածին, 1908 թ., էջ 68, գ. 20 կ.։ 10) Բժ. Սիմէօն Շահ-Նազարեանցի «Հայոց եկեղեցու վարչութիւնը և ծուխը՝ ըստ ռուս պետական օրէնքի XI հատ. I մասի», Մոսկվա, 1909 թ., էջ 180, գ. ?։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, 8 յունիսի

«Մշակի» № 75-ում իմ և կօնսիստօրիայի կարգապահի միջև ծագած բանակռուին խաղաղ վերջ դնելու համար, հրաւիրել էի նրան միջնորդ դատարանի, պարզաբանելու այս խնդիրը, որ նախ՝ նա պաշտօնական ծրարների մէջ մատնաւոր նամակներ է դրել գործակալներին ուղղած՝ հրահանգելով պատուիրակների ընտրութիւնները և երկրորդ՝ երբ այս մասին կօնսիստօրիան քննութիւն էր բացել, նա կօնսիստօրիայի հաշուում խնդրել-աղաչել է գործակալներին ուրանալ նամակների գոյութիւնը։

Այս-անգամ էլ կարգապահը «Մշակի» № 102-ում, հարցը կուրը ձգելով, խոյս է տալիս միջնորդ դատարանից, պատճառաբանելով որ կօնսիստօրիան այդ գործը քննել է իրանից գաղտնի կերպով, որ նրա հակառակորդները, որոնց թւին եմ պատկանում իբր և ես, քննութիւնից առաջ ամէն միջոց գործ են դրել հաւոգելու ու դրդելու գործակալներին, որպէսզի սրանք վատ վկայութիւն տան, այսինքն ի վնաս նրան, որ գործակալներից մի քանիսը նրա հակառակորդների մօտիկ ազգական-բարեկամներն են և եթէ գործակալը կամ այլ ոք սուտ վկայութիւն է տուել, որով և զրպարտել նրան, այն ժամանակ ինքը ոչ միայն միջնորդ դատարանի կը դիմէ, այլ և պետական դատարանով ըստ արժանւոյն պատժել կը տայ բոլոր իրան զրպարտողներին, որոնց թւում և ինձ։

Ի զուր է կարգապահը ասում, որ իր հակառակորդներն այս և այն են արել։

Թողնելով ապագային, որ կարգապահը իր դէմ արդար վկայութիւն տուող գործակալների ու իմ դէմ պետական դատարանով գործ սկսի, նորից նրան հրաւիրում եմ միջնորդ դատարանի՝ ընտրել 2 անդամի, որից յետոյ կը յայտնեմ իմ ով լինելս, կընտրեմ 2 անդամի, և նրանք կը լուսաբանեն խնդիրը։ Այս անգամ յոյս ունեմ նրա ձեռագիր մի կամ 2 նամակը նրանց առաջը դնելու և ապացուցանելու, որ ինքն է գործակալների վրա ճնշումն ու բռնութիւն գործադրել, սուտ խօսել, քան ուրիշները, որոնց անխիղճ կերպով զրպարտում է։ Նամակս հրատարակվելուց յետոյ նրան տալիս եմ 10 օր ժամանակ։ Եթէ նա նորից խոյս տայ միջնորդ դատարանից, այն ժամանակ, սկզբունք առնելով горбатаго только могила поправитъ առածը, վերջ եմ դնելու նրա հետ իմ ունեցած բանակռիւս։

Շ.

ՔԱՀԱՆԱՅԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Վերջին ժամանակներս նորից հրապարակ է եկել քահանայի ամուսնութեան հարցը։ Ասում եմ քահանայի, և ոչ՝ այլի քահանայի, ինչպէս մեզանում ասում ու կրկնում են սխալմամբ, որովհետև, մինչև օրս, դեռ ո՛չ մի քահանայ չէ ամուսնացել։ Հիմա ենք ձգտում ձեռք բերել զուտ անձնական ու բնական այդ իրաւունքը։

Ու ես համոզված եմ, որ, անշուշտ, ձեռք կը բերենք։ Արդէն հանգուցեալ կաթողիկոսի վերաբերմունքը նպաստաւոր էր։ Գալով ներկայ Կաթողիկոսին, նա էլ հակառակ չէ այդ առաջարկին, քանի որ այն վերապահել է առաջնակարգ ազգային-եկեղեցական ժողովին, որին, ինչպէս սպասելի է, մասնակցելու են և՛ աշխարհականները։

Ցայտնի է նոյնպէս, որ մեզանում ամենից առաջ այդ հարցն արծարծեց Թիֆլիսի այրի քահանաների մի խումբ։ Յետոյ, 1907 թ. «Հուլի» №№ 7-ում և 8-ում, այս տողերը գրողը նոյն հարցին նուիրեց մի յօդուած։

Քահանայի ամուսնութեան հարցով զբաղվել է և՛ ռուս կրօնական մամուլ ու եկել դրական եզրակացութեան։ Բայց ամենից աւելի ու հեղինակաւոր հրապարակ եկաւ Դալմատիայի եպիսկոպոս, յայտնի կանոնական ու եկեղեցական գրող՝ դոկտոր Նիկոդիմ Միլաշը, որ այդ հարցը լուսաբանում է Աւետարանի լուսով, և նոյնպէս լուծում քահանայի ամուսնութեան օգտին։

Արժէ ականջ դնել այս վերջինին և գրաւորապէս՝ սրան։ Այնքան զօրեղ ու այնքան համոզող են սրա բերած հիմքերը, որ թւում է ինձ, թէ հարցին վերաբերող ուրիշ բոլոր հակառակ կարծիքները միանգամից պէտք է համակերպվեն։

Ցանկանալով մի փոքրիկ ծառայութիւն անել այս կենսական հարցին, ես ուզում եմ թարգմանել Միլաշի գրքոյկը։ Դուրս կը գայ մի ջրակ դիրքի մի գրքոյկ՝ բաղկացած մօտաւորապէս 60—70 երեսից։

Ցանկալի է, սակայն, որ նրա տպագրութեան ծախսը հոգացողը ես չը լինեմ։

Է. ք. Ն.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թուրիզ, 7 յունիսի

Նորանոր տեղեկութիւններ են հասնում Սալմաստից, ուր գտնվում է թեմական կարապետ եպիսկոպոսը։ Նա այցելել է բոլոր հայաբնակ գիւղերը, ներկայ է եղել ուսումնարանների քննութիւններին, ինչ որ իր ցանկութիւնն էր։ Չենք իմանում միայն, թէ ինչ տպաւորութիւն է կազմել ուսումնարաններից, ինչ են ասել աստուածաբան և տնտեսական դրութիւնները։ Անշուշտ դրանց մասին կը տայ սրբազանը իր զեկուցումները ժամանակին։ Կարապետ եպիսկոպոսի կատարած այցելութիւնների միջոցին տեղի ունեցած մի ընդհանուր անցք արժանի է արձանագրութեան։

Սալմաստում Մահմետ հայաբնակ գիւղը գնալիս ճանապարհի վրա եղող Փէթէվուր գիւղի ժողովուրդը, որ բաղկացած է զուտ կաթոլիկ-ասորիներից, գլուխ ունենալով գիւղի դաշային (քահանային), փառաւոր հանդիսաւորութեամբ դիմաւորում է Կարապետ եպիսկոպոսին ու իջեցնում գիւղը մի օրևէ յարգանք արած լինելու համար թեմակալին։ Թեմակալ սրբազանը՝ դաշայի հաւանութեան դիմելուց յետոյ՝ առաջնորդվում է դէպի եկեղեցի և բեմից քարոզում է խուռն երկսեռ բազմութեան Աստուծոյ բանը, այն է՝ ապրել սիրով և հաւասարաշխութեամբ բոլոր ազգակից և օտարադաւանների հետ անխտիր, ճանաչել հասարակաց շահը և նպաստել նրա զարգացմանն ու առաջադիմութեանը և այլն։ Թեմակալի քարոզը մեծ մխիթարութիւն է պատճառել հայախօս ասորիներին, որոնք սրտի գոհունակութեամբ ճանապարհել են սրբազանին դէպի Մահլամ գիւղը։ Հետևել օրը Խորոմա գիւղում բուն դրած լազարիստները, լսելով որ հայ լուսաւորչական թեմակալը յարգանքի է արժանացել գիւղացիներից և, որ քստմնելին է, ոտք է դրել ուղղափառ կաթոլիկների եկեղեցին ու բեմից քարոզ խօսել պրոպագանդայի հլու հօտին, անհամբերատար ֆանատիկոսութեամբ չարացած դառն յանդիմանութիւններ ու պարսաւանքներ թափելուց յետոյ դաշայի երեսին՝ զրկում են խեղճին պաշտօնից՝ որպէս մի եղեռնագործի։

Ցաւալի դէպքը ինչպէս շատերին, նոյնպէս և Կարապետ եպիսկոպոսին մեծ վրդովմունք է պատճառել։ Թեմակալը առանձին նամակով յայտնել է թեմական խորհրդին, որ առաջնորդական փոխանորդը սրբազանի կողմից դիմում անէ ֆրանսիական կօնսուլին և միջնորդէ, որ գուցէ նեռումն շնորհեն դաշայի աններելի յանցանքին և խեղճ մարդը չը զրկվի իր պաշտօնից ու հացից։

Պատահած անցքը, շեշտեցի, բնորոշ է այն ճշգրիտ հայեցակէտով, որ թէկուզ կրօնով միացած՝ բայց լեզուով, սովորութիւններով ու արիւնով բաժան և օտար հոգևոր պաշտօնեաները, և որպէս այդպիսին անդրալեռնական կրօնաւորները, աշխատել են միշտ չարիք սերմանել ժողովուրդների միջև և պղտոր պահել ջուրը՝ ձուկ որսալու անյագ տենչերով։ Տեղին է անտարակոյս խորհուրդ տալ մեր հարևան հայերին և ասորիներին, լինեն դրանք բողոքական թէ կաթոլիկ, որ ուշ կամ կանուխ ձգտեն իրանք կատարել իրանց համայնքի հոգևոր գործերը աւելի, քան թէ օտարները, որոնց սրտից ու զգացմունքներից հեռու են համայնքի ճշմարիտ շահերը, պաշտպանելու նրա մէջ սէր, համերաշխութիւն և առողջ բողբոջներ առաջացնելու ոգին։

Հայկազուն

ՊՐՈՒՍԻԱՅԻ ՄԻԶԱՄՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՏԻԿԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՊԱՊԻ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Լայպցիգ, 3/16 յունիսի

Մենք ծանօթացրինք «Մշակի» ընթերցողներին պապի այն շրջաբերականի հետ, որով նա ծանր վիրաւորանք է հասցնում բողոքականներին և առհասարակ բէֆօրմացիային։ Սակայն այն ազդուկը, որ այդ առիթով բարձրացաւ գերմանական բողոքական աշխարհում և որի մասին ակնարկեցինք անցեալ յօդուածում, այժմ արդէն չափազանց մեծ ծաւալ է ստացել և համարեա թէ սպառնում է խանգարել այն խաղաղութիւնը, որ գոնէ արտաքուստ կար գերման-բողոքականների և գերման-կաթոլիկների մէջ։

Ամբողջ Գերմանիայում տեղի են ունենում փոթորկալից բողոքի ժողովներ հազարաւոր մարդկանց ներկայութեամբ, առանց սեռի խտրութեան, որոնք ամենախիստ լեզուով, երբեմն հեգնական ու ծաղրական ոճով, բողոքում են պապի ոտնձգութեան դէմ, որի նպատակն է, ասում են, խանգարել դաւանութիւնների մէջ եղած խաղաղութիւնը։ Անտեղի կերպով ճայնոյելու իրաւունքը Հռոմը միշտ իրան է վերապահել,— ասում են գերմանացի բողոքականները,— բայց մեր պարտքն է այնպիսի դրութեան մէջ դնել պապին, որ այդպիսի հայհոյանքներ բէֆօրմացիայի և բէֆօրմատորների հասցէին այլևս երբէք չը կրկնվեն։ Այդպիսի մեծ բողոքի բազմաթիւ ժողովներից բաւական ենք համարում յիշել Բերլինում գումարվածը՝ 6000 հոգու ներկայութեամբ, Դիւսսելդորֆում եղածը՝ 7000-ի մասնակցութեամբ, Վարտբուգինը՝ 2000-ի ներկայութեամբ և Լայպցիգինը, որին ես էլ ներկայ էի, 4000 հոգու մասնակցութեամբ։

Իսկ կաթոլիկներն իրանց կողմից այդ ժողովներն ու նրանց մէջ արտասանված ճառերն հաստատելով ատելութիւն ու հալածանք կաթոլիկ եկեղեցու դէմ, վրդովվում են նոյնպէս և խորհուրդ են տալիս բողոքականներին չափը չանցկացնել, հակառակ դէպքում՝ մի ժողովի դէմ իրանք երկու ժողով կը գումարեն և իրանց ասելիքը կասեն, որովհետև նրանք հանգիստ կերպով չեն կարող թոյլ տալ, որ բողոքականները անպատիժ կերպով հայհոյեն ու անպատուեն կաթոլիկ եկեղեցին և նրա գլխին՝ Հռոմի պապին։

Սակայն կաթոլիկների մէջ կայ նաև մի բաւական ստուար խումբ, որ ի սրտէ հակառակ է բարի յարաբերութիւններն այդպէս բռնազբօսիկ կերպով լարելուն, և լուռ-լուռ դատապարտում է պապի շրջաբերականը, որ այդքան անախորժութիւնների պատճառ է դարձել արդէն և աւելի ծանր անախորժութիւնների պատճառ կարող է դառնալ ապագայում։ Որովհետև պապի շրջաբերականի դէմ բողոքում են ոչ միայն վերևն յիշված ժողովրդական ցոյցերով, այլ, որ աւելի ուշագրաւ է, համարեա բոլոր գերմանական լանդտագները (առանձին երկիրների պարլամենտները) ամենախիստ վճիռներ են դնում պապի շրջաբերականի դէմ, համարելով այն՝ խաղաղութիւնը խանգարելու մի հակաքրիստոնէական փորձ։ Լանդտագների բռնած դիրքի մէջ վտանգաւորն այն է, որ միջադէպը կարող է ազդեցութիւն ունենալ երկրի օրէնսդրական գործունէութեան վրա ի վնաս կաթոլիկութեան։

Ամենից աւելի ուշադրութեան արժանին ամբողջ գործի մէջ այն է, որ բոլոր գերմանական իշխանների մէջ, որոնց մեծագոյն մասը բողոքական է, միայն Սաքսոնիայի կաթոլիկ թագաւոր Ֆրիդրիխ Աւգուստը քաջութիւն ցոյց տուեց անհատապէս երևնելու պապի շրջաբերականի դէմ, յայտնելով որ նրա այդպիսի վարմունքը մեծ վիրաւորանք է իր երկրի ազգաբնակութեան համար, որի ամենամեծ մասը բողոքական է, ուստի և նա որոշել է ամբողջ խնդրի մասին պապին մի ինքնաձեռագիր նամակ ուղղել։ Բոլոր գերմանական թերթերը մեծ ոգևորութեամբ ու գոհունակութեամբ գնահատում են Սաքսոնիայի թագաւորի արած տղամարդու վայել քայլը, շեշտում են, որ նա իբրև կաթոլիկ աւելի պիտի դժուարանար այդպիսի մի ծանր քայլ անելու, անուանում են նրան «մի կաթոլիկ բողոքական՝ գերմանական գահի վրա», ամեն տեղից երախտագիտութեան ու շնորհակալութեան հեռագիրներ են ուղղում նրան, ինչպէս Լայպցիգի համալսարանը, ամբողջ հոգևորականութիւնը և այլն, իբրև օրինակ են ներկայացնում նրան բողոքական թագաւորների և իշխանների համար, որ մինչև այժմ ոչ մի խօսք չը գտան, որով արտայայտէին իրանց դժգոհութիւնն ու զայրոյթը պապի շրջաբերականի դէմ. մինչև անգամ այդ առիթով յիշում են, որ բէֆօրմացիայի ժամանակ էլ դարձեալ մի սաքսոնական իշխան էր, Ֆրիդրիխ Իմաստունը, որ պապի, կայսեր ու բայիստագի դէմ պաշտպանեց բէֆօրմատոր Լուբերին անտեղի հալածանքներից, թէև ինքը կաթոլիկ էր և մինչև կեանքի վերջն էլ կաթոլիկ մնաց։

Տարօրինակ դրութիւն է առաջ եկել պրուսական կառավարութեան միջամտութեան և պապի պատասխանի շնորհիւ, որ նորանոր մեկնութիւնների ու դժգոհութիւնների առիթ է տալիս։ Խնդիրն այն է, որ պրուսական կառավարութիւնը, որ պապին սուվերէն ճանաչելով՝ նրա մօտ յատուկ դեսպան է պահում, յունիսի 6-ին այդ դեսպանի միջոցով մի գրութիւն է յանձնում Վատիկանին, որի բովանդակութիւնը հետևեալն է. «Պրուսական կառավարութիւնը յայտնում է Վատիկանին, թէ որովհետև պապի վերջին շրջաբերականի մի պարբերութիւնը վերաբերում է բողոքականներին, և բէֆօրմատորների ու բէֆօրմացիային յարած իշխանների ու ազգերի մասին ոչ միայն դաւանական, այլև նրանց բարոյականութեան մասին կարծիքներ են յայտնված, այդ պատճառով Պրուսիայի աւետարանական շրջաններում մեծ դժգոհութիւն ու վրդովմունք է առաջ եկել և բողոքականներն իրանց ծանրագոյն վիրաւորված են զգում պապի խօսքերից։ Դրա համար էլ պրուսական կառավարութիւնը ստիպված է զգում իրան՝ բողոքել այդ, պրուսական եպիսկոպոսներին ևս (կաթոլիկ) ուղղված, շրջաբերականի դէմ, և դրանից առաջացած բոլոր դաւանական խաղաղութեան խանգարումների պատասխանատուութիւնը ձգել Վատիկանի վրա, որ այդպիսի շրջաբերական է հրատարակել։ Պրուսական կառավարութիւնը իրաւունք է համարում այդ առել այն պատճառով, որ ինքը Վատիկանի հետ բարի յարաբերութիւն պահպանելու համար՝ յատուկ դեսպանութիւն է պահում Հռոմում և իր երկրում էլ միշտ հոգս է քաշում ամրացնելու բողոքական և կաթոլիկ ազգաբնակութեան մէջ եղած դաւանական խաղաղութիւնը»։ (Բոլորովին բառացի չենք բերել թուղթը)։

Այդ թղթի հետ միասին պրուսական կառավարութիւնը յանձնարարում է իր դեսպանին յոյս յայտնել, որ Վատիկանը միջոց ու ճանապարհ կը գտնի՝ շրջաբերականի պատճառած վնասները ըստ կարելոյն չեզոքացնելու. յատկապէս ցանկութիւն յայտնելու, որ գերմանական եպիսկոպոսներին արգելվի՝ յիշեալ շրջաբերականը եկեղեցիներում կարդալու կամ իրանց պաշտօնական թերթերում հրատարակելու։

Գերմանական դեսպանը յունիսի 8-ին կատարում է իր կառավարութեան յանձնարարութիւնը, 11-ին պաշտօնապէս յայտնում են նրան, որ պապն արդէն արգելել է գերմանական եպիսկոպոսներին բեմից կարդալ կամ իրանց թերթերում հրատարակել շրջաբերականը. իսկ յունիսի 13-ին Վատիկանը յանձնում է գերմանական դեսպանին հետևեալ դրութիւնը, կարդինալ դիւանապետ Մերրի Դէլ-Վալի ստորագրութեամբ.

«Ներքև ստորագրող կարդինալ դիւանապետը պատիւ ունի յայտնելու Նորին գերազնութեան պրուսական դեսպանին, որ ստացել է ամսոյս 8-ի պատուական գրութիւնը՝ այն վրդովմունքի մասին, որ երևացել է պրուսական ազգաբնակութեան մէջ «Editae saepe» շրջաբերականի հրատարակութիւնից։

«Սուրբ Աթոռը կարծում է, որ վրդովմունքն առաջ է եկել նրանից, որ շրջաբերականի ի նկատի առած նպատակը ուղիղ չէ հասկացվել և այդ պատճառով էլ նրա մի քանի նախադասութիւնները այնպիսի մեկնութիւն են ստացել, որ բոլորովին հեռու են սուրբ հօր (պապի) նպատակից։ Դրա համար էլ ներքև ստորագրող կարդինալը կարևոր է համարում յայտնել, որ նորին սրբութիւնը իսկական ցաւով լսեց այդպիսի վրդովմունքների լուրը, որովհետև նրա հոգուց բոլորովին հեռու է եղել Գերմանիայի ոչ-կաթոլիկներին կամ նրանց իշխաններին վիրաւորելու որևէ նպատակ»։

Այս է պատասխանի գլխաւոր կորը. շարունակութեան մէջ յիշվում է, թէ պապը միշտ հաժակրանքով ու խրգանքով է վերաբերվել գերմանացիներին և նրանց իշխաններին և այլն։

Մինչ պաշտօնական շրջաններում Վատիկանի այս պատասխանից շատ գոհ են և Պրուսիայի մինիստր-պրեզիդենտը իր շնորհակալութիւնն է յայտնել արդէն Հռոմին այդ առիթով, տեղ տեղ էլ այդ պատասխանը համարում են պապականութեան համար կատարեալ պարտութիւն, գլխաւորապէս գերմանացի եպիսկոպոսներին արգելելը շրջաբերականը հրատարակել, բողոքականները դեռ ամենամեծ մասով շատ դժգոհ են Վատիկանից և շարունակում են իրանց բողոքի ժողովներն ու ցոյցերը։ Ապտակը մեծ է ապտակ, եթէ նրանից յետոյ խփողը ցաւ էլ յայտնէ և բացատրէ, թէ վիրաւորելու համար չէ խփել,— ասում են գերմանական թերթերը։ Յատկապէս զայրոյթ են պատճառում Վատիկանի թղթի այն խօսքերը, թէ պապի շրջաբերականի ճպատակը ուղիղ չէ հասկացված, այդ պատճառով է վրդովմունք առաջ եկել։ Գերմանիայում։ Մինչ ոմանք Վատիկանի վերջին թուղթը հաւասարազոր են համարում «հայհոյական շրջաբերականի» ոչնչացման կամ յետ վերցնելուն, ուրիշները մատնացոյց են անում այն հանգամանքի վրա, որ պապը ցաւ է յայտնում ոչ թէ իր հայհոյական խօսքերի համար, այլ գերմանացիների վրդովմունքի համար, որ նա բացատրում է իր շրջաբերականի սխալ ըմբռնողութեամբ։

Միակ գիջումը այդպիսով մնում է պապի հրամանը, որ գերմանական եպիսկոպոսները շրջաբերականը չը հրատարակեն։ Բայց այդ գիջումն էլ միայն ձևական բնաւորութիւն ունի, որովհետև գերմանական բոլոր թերթերում արդէն վաղուց տպված է այդ շրջաբերականը և շատ չնչին նշանակութիւն ունի, որ մի քանի պաշտօնական թերթեր այժմ պիտի չը տպեն այն։ Մինչ այս մինչ այն՝ պապի նոր հրամանն ստանալուց առաջ Բամբերգի արքեպիսկոպոսն արդէն շրջաբերականը տպել է տուել իր թեմի պաշտօնական թերթում և տարածել. այնպէս որ պապի այդ կարգադրութիւնն էլ բաւարար չէ կարող համարվել բողոքականներին հանգստացնելու համար։ Նրանց մի մասը այժմ բացարձակ կերպով պահանջում է, որ կամ պապը բոլորովին յետ վերցնէ շրջաբերականը, որ անկարելի է, քանի որ պապն անսխալական է, և կամ պրուսական դեսպանը յետ կանչվի Վատիկանից և առհասարակ վերացվի այդ պաշտօնը, որովհետև նրա գոյութիւնն անհասկանալի է. պապն անսխալական է և ամեն այսպիսի դէպքում բողոքականները պէտք է ընկնարար մեղաւոր դուրս գան. իսկ դրա համար ծախս անել և դեսպանութիւն պահել ոչ մի միտք չունի։

Հետաքրքրական է սօցիալ-դեմօկրատների բռնած դիրքը այս ամբողջ պատմութեան մէջ։ Նրանք էլ ի հարկէ դատապարտում են այն կոպիտ վիրաւորական ձևը, որ արտայայտել է պապը իր շրջաբերականի մէջ բայց զգուշացնում են բանւորական դասակարգին այդպիսի ցոյցերի մասնակցել, որից նրանք ոչ մի օգուտ ունենալ չեն կարող։ Նրանք յատկապէս մատնացոյց են անում այն հանգամանքի վրա, որ եթէ սօցիալ-դեմօկրատներն այդպիսի ցոյցեր անէին իրանց արդար իրաւունքի պաշտպանութեան համար, ոստիկանութիւնն այդպէս հեշտ ու հանգիստ թոյլ չէր տայ։ Ապա նրանք շեշտում են, որ բողոքականների այս վերջին ժողովներում խօսածները՝ իրանց ոճի և հայհոյական, անարգական բառերի ու դարձուածքների տեսակէտից՝ ոչնչով յետ չեն մնում պապի շրջաբերականի յեղուից, այնպէս որ ազդուկ բարձրացնելն ի զուր է բոլորովին։ Ի վերջոյ բերում են Լութերի գրուածքներից կտորներ, ցոյց տալու համար թէ նա իր ժամանակին պակաս անարգանքով ու վիրաւորական ձևով չէ խօսել պապերի և կաթոլիկ եկեղեցու մասին։ Մի խօսքով՝ սօցիալ-դեմօկրատների կարծիքն է, որ երկուսն էլ իրար արժէն. կաթոլիկ եկեղեցին իր պապով ու կարդինալներով և բողոքական եկեղեցին իր պաստօրներով ու կօնսիստորիաներով։

Վերջացնում եմ յօդուածս։ Մի կաթոլիկ քահանայ ամբողջ վէճի մասին հետևեալ կարծիքն է յայտնում. 1600 տարի է, որ Կոստանդինն ազատ թողեց քրիստոնէութեան պաշտամունքը Իտալիայում, բայց այսօր էլ իտալական ժողովուրդը դեռ շատ հեռու է քրիստոնեայ լինելուց։ Նրա մէջ իշխում են ամեն տեսակ մնոտիապաշտութիւններ և վնասակար սովորութիւններ (ինչպէս տաճարի յատակնու սիւների տակը լիզելը, որ հայոց մէջ էլ կայ), որոնք վայելում են կաթոլիկ եկեղեցու հովանաւորութիւնն ու պաշտպանութիւնը. զանազան պատահարներից ազատ մնալու համար գերպաններում պահում են սրբերի փոքրիկ պատկերներ, որ եկեղեցին իր կողմից օրհնում է և այլն և այլն։ Ի՞նչ է անում կաթոլիկ եկեղեցին իտալական ժողովրդի կրօնական կրթութեան համար. համարեա ոչինչ։ Աշխատում են ժողովրդից միայն փող կորզել, բայց 1600 տարվայ մէջ սովորեցրել են նրան միայն 10 պատուիրանները ու եկեղեցու 7 խորհուրդները։ Իսկ նոր-նոր սրբեր՝ օրքան կաւենաք։ Դպրոցները գտնվում են սոսկալի դրութեան մէջ։ Այնտեղ իշխում է հետևեալ սկզբունքը. մարդիկ օրքան քիչ սովորեն, այնքան աւելի կամազուրկ կերպով կենթարկվին եկեղեցու բացարձակ հեղինակութիւններին։ «Եւ այս մարդիկ համարձակվում են,— վերջացնում է կաթոլիկ քահանան,— անարգել գերմանական բէֆօրմատորներին, նրանց հերետիկոս համարել և այլն, մինչ միւս կողմից լաւ փող են հաւաքում Գերմանիայում պապի համար։ Մեզ, կաթոլիկներս, այդպիսի բաներ հարկաւոր չեն. դեռ մի քանի բան էլ դրանից աւելի»։

Երուանդ Տէր-Մինասեանց

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

14 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Զինուորական խորհուրդն ընդունեց գլխաւոր ինտենդանտական վարչութեան առաջադրութիւնը՝ ժամակարարական մթերքները զինուորական վարչութեան համար 1911 թ. ընթացքում գէնտվային վարչութիւնների ձեռքով պատրաստելու մասին։

Սվերբէեվին հրամայվեց արտակարգ դեսպան և լիազօր մինիստր լինել հելլէնների թագուհուն կից։

ՕԴԵՍՍԱ. Երէկ եկաւ սենատոր Դէդիլինը։

ՄԻՆՍԿ. Սկօբելէվի բանակում պահապան-դինուորը կանգնեցրեց մի հրէական կառք՝ մանուֆակտուրային ապրանքներով։ Կառքերի տակ գտնվեցին արկղներ 5380 լիթը փամփուշտներով և 3167 գիլզանոցներով։ Զինուորական և քաղաքացիական իշխանութիւններ քննութիւն են կատարում։

Միկայէվիչի կայարանում գնացքի մէջ մեռաւ Թիֆլիսի նահանգական դատարանի անդամ Պապարիկոն։

ՆԻԿՕԼԱՅԵՎ. Մեռաւ Սեվաստոպոլի պաշտպան գնդապետ Զուլինը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½,—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ՉԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՉԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Հրաւէրները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վիրատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—63

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“

Գրախանութում վաճառվում է.

Աղետարան ճաշու եւ Տօնի իւրաքանչիւր աւուրց ի բոլոր տարւոջն ըստ նորոյ օսմանցւոյն։ Գիրքը կազմված է և արժէ պօստի ծախքով 3 ռուբլի։ Սակաւաթիւ օրինակներ են մնացել։ 740. 3—1

Թիֆլիսի Քաղաքային Ուպրավան

սրանով յայտարարում է, որ յունիսի 19-ին 1910 թ., ցեր. ժամը 12-ին, նշանակված է մրցութիւն Նաթլուղում կառուցվելիք Քաղաքային Սպանդանոցի համար 5.000,000 հատ աղիւս շինութեան տեղում յանձնելու պայմանով. աղիւսի յիշեալ քանակը կարող է 25%-ով աւել կամ պակաս լինել։ Մրցութեան մէջ ժամանակել ցանկացողները պէտք է իրանց գրաւոր յայտարարութիւնները ներկայացնեն փակ ծրարներով և հետևեալ վերնագրութեամբ՝ „Къ конкуренціи на 19 іюня 1910 г. на поставку кирпича для новой скотобойни“, նոյնպէս և ներկայացնել 1000 ր. գրաւական։ Մրցութեան հետևանքների քննութիւնը պատկանում է սպանդանոցի կառուցման համար կազմված յանձնաժողովին, որը և վճիռ կը կայացնէ յիշեալ ժամակարարական գործը յանձնելու այն անձին, որի առաջարկութիւնները կը համարվեն աւելի նպաստաւոր։ Աղիւսի մատակարարութեան համար ժամանակամիջոց է նշանակվում երկու տարի, այսինքն մինչև յունիսի 1-ը 1912 թ.։ Աղիւսը կարելի է ձեռք բերել ցանկացած գործարանից, սակայն այն պայմանով, որ նրանք այրված լինեն Հօֆմանեան վառարանում։ Անկախ դրանից, աղիւսը կարելի է ընձեռել նորակառոյց գործարանի նիւթեղէնից, ըստ որում՝ նոր կառուցվելիք գործարանի համար քաղաքը ձրիաբար տեղ կը յատկացնէ նոր սպանդանոցի մօտերքը։ 1910 թ. ընթացքում անհրաժեշտ է մատակարարել 2.000,000 հատ աղիւս, սկսած օգոստոս ամսից՝ իւրաքանչիւր ամիս համաչափ քանակով, 1911 թ. 2.000,000 աղիւս, իսկ 1912 թ. 1.000,000 աղիւս՝ մինչև յունիսի 1-ը։ Ամսեամիս մատակարարելու ճիշդ ժամանակամիջոցները կորոշվին պայմանագիրը ստորագրելու ժամանակ։ Աւելի մանրամասն տեղեկութիւններ և պայմանները կը տրվեն լի օրերը նոր սպանդանոցի գրասենեակում՝ Նաթլուղում, և Քաղաքային Ուպրավում։ Այն անձերը, որոնք կը ցանկանան աղիւսը մատակարարել քաղաքումս գոյութիւն ունեցող գործարաններից, պարտաւոր են երկու օր առաջ՝ մինչև մրցութիւնը՝ ներկայացնել աղիւսի նմուշները նոր սպանդանոցի գրասենեակին։

(ա.օ.) 736. 2—2

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.